



**ԳԷՈՐԳ ՍԱՐԿՍՅԱՆԻ ԳԷՈՐԳԵԱՆԻ
ՀՈԳԵԻՈՐ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ
2010–2026**



**ԲԱՐՁՐԱՇՆՈՐՅ ՏԵՐ ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆԻ
ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ՝ ԱՆԱՊԱՏԻ ՍԲ. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՄԱՏԱԿԱՐԱՐ ՀՈՎԻԻ ԲԱՐԵՇՆՈՐՅ ԳԵՈՐԳ ՍԱՐԿԱԲԱԳ
ԳԵՈՐԳԵԱՆԻ ՍՏԵՂԾԱԾ ԵՒ ՏՊԱԳՐԱԾ ԳՐՔԵՐԸ**

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի հովանաւորութեամբ կրօնական, հոգեւոր, ծիսական եւ դաստիարակչական հրատարակութիւնները կը միտին հոգեկան եւ իմացական բաւարարութիւն տալ բոլոր տարիքներու՝ մանուկներէն մինչեւ տարեցներ, որովհետեւ կը հաւատանք, որ իւրաքանչիւր գիրք տարբեր հոգեւոր կարիք մը եւ նոր պատգամ կը փոխանցէ ընթերցողին, կը խրախուսէ, կը համեմէ եւ կ'իմաստաւորէ անոր կեանքը:

Ուրախութեամբ կու գանք յայտնելու, որ օրհնութեամբ Թեմակալ Առաջնորդ՝ Բարձրաշնորհ Տէր Յովնան Արք. Տէրտէրեանի, անցնող տարիներուն տարբեր հրատարակութիւններով Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմէն ներս լոյս ընծայուեցան Անապատի Սուրբ Կարապետ Հայաստանեայց Եկեղեցւոյ Մատակարար Հովիւ Բարեշնորհ Գեորգ Սարկաւագ Գեորգեանի կրօնաբոյր պազմաթիւ աշխատասիրութիւնները, որոնք կը հարստացնեն Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի հոգեւոր գրականութեան անդաստանը եւ աստուածաշնչական պատասխաններ կու տան հաւատացեալը յուզող բազմաթիւ խորքային հարցերու: Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Բարձրաշնորհ Տէր Յովնան Արք. Տէրտէրեան իր քաջալերական խօսքերով բարձր կը գնահատէ Անապատի Սուրբ Կարապետ Հայաստանեայց Եկեղեցւոյ Մատակարար Հովիւ՝ Բարեշնորհ Գեորգ Սարկաւագ Գեորգեանը, որուն գրիչէն են ծնած վերոնշեալ հոգեշունչ աշխատութիւնները, որոնք առիթ կ'ընծայեն մեր հաւատացեալներուն՝ մաքուր սրտով եւ վաւերական գիտելիքներով լուսաբանուելու եւ կենդանի ու ապրուած կեանքով ու հաւատքով զԱստուած մնայուն ներկայութիւն դարձնելու իրենց կեանքին մէջ: Առաջնորդ Սրբազան Հայրը միաժամանակ կոչ կ'ուղղէ բոլորին, թէ՛ չափահասներուն եւ թէ՛ երիտասարդներուն, առաւելագոյնս օգտուելու քրիստոսաւանդ Աւետարանի պատգամները լուսաբանող ու մեր Եկեղեցւոյ աւանդութիւնները բացատրող այս հատորներէն: Վերջապէս Բարձրաշնորհ Սրբազանը Թեմի իր զաւակներուն կը յորդորէ ըսելով. «ճաշակեցէ՛ք այստեղ ի մի բերուած հիւթեղ պատգամներէն ու մեկնաբանութիւններէն, եւ լուսաւորեցէ՛ք Ձեր հոգին Աւետարանական ու մեր Սուրբ Եկեղեցւոյ յաւերժական խորհուրդներով»:

Դիւան Առաջնորդարանի

Ապրիլ 1, 2025

ՀԵՂԻՆԱԿԻ ԽՕՍՔ

Աստծու շնորհքով եւ օրհնութեամբ՝ տարիների ընթացքում առիթ եմ ունեցել պատրաստելու եւ հրատարակելու կրօնական, աստուածաբանական եւ Հայ Եկեղեցու հոգեւոր ժառանգութեանը նուիրուած մի շարք աշխատութիւններ:

Այս աշխատութիւնները ծնունդ են առել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգեւոր եւ աստուածաբանական հարուստ ժառանգութեան հանդէպ սիրուց, հաւատքից եւ ծառայութեան ձգտումից: Դրանց էջերում ամփոփուած են Սուրբ Գրքի պատգամները, Եկեղեցու Հայրերի իմաստութիւնն ու մեր սուրբ հաւատքի դարաւոր աւանդութիւնը՝ այն յոյսով, որ դրանք ընթերցողի համար կարող են դառնալ հոգեւոր ճանաչման, խորհրդածութեան եւ հաւատքի զօրացման միջոց: Դրանք խոնարհաբար ներկայացնում եմ յուսալով, որ իրենց համեստ նպաստը կը բերեն մեր Եկեղեցու հարուստ ժառանգութեան աւելի խորը ճանաչմանը, գնահատմանը եւ փոխանցմանը:

Նախ եւ առաջ, սրտի խոր երախտագիտութեամբ փա՛ռք եւ գոհութիւն եմ յայտնում Ամենակալ Աստծուն, Որի շնորհքով, օրհնութեամբ եւ առաջնորդութեամբ հնարաւոր եղաւ իրականացնել այս աշխատանքները: Նրա պարգեւած զօրութեանը, իմաստութեանն ու շնորհին եմ պարտական այն ամէնի համար, ինչ հնարաւոր է եղել կատարել այս ճանապարհին:

Որդիական երախտագիտութիւնս եմ յայտնում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն, որի դարաւոր հոգեւոր, աստուածաբանական եւ հայրաբանական ժառանգութիւնը ներշնչանքի, ուսուցման եւ առաջնորդութեան մշտական աղբիւր է եղել իմ աշխատանքների համար:

Առանձնապատուկ որդիական երախտագիտութիւնս եմ յայտնում Թեմիս բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանին՝ իր հայրական օրհնութեան, հոգեւոր առաջնորդութեան եւ մշտական քաջալերանքի համար: Սրբազան Հօր ցուցաբերած վստահութիւնն ու զօրակցութիւնը մեծապէս քաջալերել են ինձ՝ շարունակելու իմ հոգեւոր եւ աստուածաբանական աշխատանքները՝ ի ծառայութիւն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ նրա հաւատացեալ ժողովրդի:

Սրտագին երախտագիտութիւնս եմ յայտնում նաեւ ընտանիքիս՝ սիրոյ, համբերութեան, հասկացողութեան եւ մշտական աջակցութեան համար: Նոյնպէս շնորհակալութիւնս եմ յայտնում բոլոր նրանց, ովքեր տարիների ընթացքում իրենց աղօթքով, քաջալերանքով, խորհրդով, գործակցութեամբ կամ այլ կերպ իրենց նպաստն են բերել այս աշխատանքների իրականացմանը:

Եթե այս աշխատութիւնները կարողանան ընթերցողին նոյնիսկ մի փոքր քայլով աւելի մօտեցնել Աստուծոյ հօսքին, հաղորդակից դարձնել Եկեղեցու Հայրերի հոգեւոր իմաստութեանը եւ առաջնորդել մեր սուրբ հաւատքի առաւել խոր ճանաչմանն ու ապրմանը, ապա դրանք ծառայած կը լինեն իրենց ճշմարիտ նպատակին:

Սրտագին մաղթանքս է, որ այս Էջերի միջոցով ընթերցողը ոչ միայն գիտելիք ձեռք բերի, այլեւ հոգեւորապէս զօրանայ, իր հաւատքի մէջ հաստատուի եւ նորոգուած սրտով շարունակի իր ճանապարհը Քրիստոսի հետ:

Թող այս աշխատութիւնները ծառայեն Աստուծոյ փառքին, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգեւոր առաքելութեանը եւ բոլոր նրանց օգտին, ովքեր փափագում են աւելի խորապէս ճանաչել եւ ապրել մեր սուրբ հաւատքն ու հոգեւոր ժառանգութիւնը: Թող Ամենակալ Աստուած օրհնի իւրաքանչիւր ընթերցողի, լուսաւորի նրա միտքը, զօրացնի նրա հաւատքը եւ առաջնորդի այն ճանապարհով, որը տանում է դէպի ճշմարտութիւն, յոյս եւ փրկութիւն՝ ի Քրիստոս Յիսուս:

Եթե այս համեստ աշխատանքները, Աստծու շնորհով, կարողանան թելուզ մէկ հոգու աւելի մօտեցնել մեր Տիրոջը՝ Յիսուս Քրիստոսին, արթնացնել նրա մէջ սերն ու նուիրումը դէպի Մայր Եկեղեցին, ամրապնդել նրա առաքելական հաւատքը եւ քաջալերել նրան մնալու ճշմարիտ վարդապետութեան մէջ, ապա դրանք արդէն իսկ արդարացրած կը լինեն իրենց նպատակին:

Քանզի Եկեղեցու ծառայութեան մէջ մեծութիւնը չի չափուում գրուած Էջերի կամ հրատարակուած հատորների թւով, այլ այն հոգիներով, որոնք դրանց միջոցով գտնում են ճշմարտութիւնը, զօրանում հաւատքի մէջ եւ աւելի մօտենում Աստծուն: Եթե այս գրքերը կարողանան գոնէ մէկ հաւատացեալի համար դառնալ մխիթարութեան, լուսաւորութեան, հաւատքի ամրութեան եւ հոգեւոր զարթօնքի աղբիւր, ապա իմ բոլոր ջանքերն ու աշխատանքները լիովին արդարացած կը համարեմ՝ ամբողջ փառքը վերագրելով ոչ թէ ինձ, այլ Ամենակալ Աստծուն, Ով է ամեն բարի պարգեւի եւ շնորհի Աղբիւրը:

Այս յոյսով եւ այն հաստատ համոզումով, որ քրիստոնէական ամեն ծառայութիւն եւ աշխատանք իր ճշմարիտ իմաստն ու արժէքը գտնում է Աստուծոյ փառքին ընծայուելով, այս հրատարակութիւնները խոնարհաբար յանձնում եմ ընթերցողների ուշադրութեանը՝ իբրեւ առաջնորդող պատգամ ունենալով Պօղոս Առաքելի հետեւեալ խօսքը. **«Ինչ էլ անեք, ամեն ինչ արե՛ք Աստուծու փառքի համար»** (Ա. Կորնթ. 10.31):

Փա՛ռք եւ գոհութիւն Աստուծոյ՝ ամենայնի համար:

Գեորգ Սարկաւազ Գեորգեան

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ



Գեորգ Սարկաւագ Գեորգեանը ծնուել է 1957 թուականի դեկտեմբերի 27-ին՝ Երեւանում: 1965–1975 թթ. յաճախել եւ աւարտել է Երեւանի թիւ 122 միջնակարգ դպրոցը, իսկ 1975–1980 թթ. ուսանել եւ աւարտել է Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական Համալսարանի ռադիոէլեկտրոնիկայի բաժանմունքը:

1980–1984 թթ. համալսարանն աւարտելուց յետոյ աշխատել է Երեւանի Մաթեմատիկական Մեթոնների Գիտահետազոտական Հիմնարկում՝ որպէս ճարտարագետ, իսկ 1983-1987 թթ. աշխատել է Գեղագիտութեան Ազգային Կենտրոնում՝ որպէս խմբի ղեկավար: Զուգահեռաբար աշխատել է Լուսաշիսի Տան մշակութային-լուսաւորական եւ դաստիարակչական կրթութեան կենտրոնում:

1987-1990 թթ. Հայաստանի Պետական Ֆիլիարմոնիայում որպէս կոնտրաբասահար հանդէս է եկել աշխարհահռչակ դաշնակահար եւ երգահան Դաւիթ Ազարեանի եռեակի կազմում՝ մասնակցելով միջազգային փառատօների եւ ծայնագրելով մի քանի ծայնասկաւառակ:

1992 թ. տեղափոխուել է Միացեալ Նահանգներ եւ բնակութիւն հաստատել Ռոդ Այլենդ Նահանգում: 1992–2019 թթ. ծառայել է Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Հայց. Եկեղեցում (Providence, Rhode Island):

Յամի Տեառն 2005 թ. յունուարի 25-ին, ձեռամբ Գերաշնորի Տ. Խաժակ Արք. Պարսամեանի, ձեռնադրուել է սարկաւագ:

2007 թ. Սրբազան Հօր կարգադրութեամբ Սուրբ Ներսէս Ընծայարանում յաջողութեամբ յանձնել է քառամեայ ուսումնական ծրագրի աւարտական քննութիւնները, ապա հոգեւոր ուսումը շարունակել է Սուրբ Խաչ Յունական Ուղղափառ Աստուածաբանական Հելլենական Քոլէճում: 2012 թ. ծառայել է Սուրբ Մարկոս Հայց. Եկեղեցում (Springfield, Massachusetts)՝ որպէս մատակարար հովիւ:

2005–2019 թթ. Ռոդ Ալենդի եւ Մասաչուսեթսի տարբեր ընկերութիւններում աշխատել է որպէս ծրագրային որակի ապահովման աւագ ճարտարագէտ:

2010–2019 թթ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանում հրատարակուել են Գեորգ Սարկաւազի հեղինակած աստուածաբանական մի շարք գրքեր, որոնք ընդգրկուել են Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչէ եւ Թամար Մանուկեան» Մատենադարանի, «Մատենադարան-Գանձասար» գիտամշակութային կենտրոնի եւ Հայաստանի Ազգային Գրադարանի հաւաքածուներում:


2019 թ. ծառայութեան Է կոչուել Բըրբանքում գտնուող ԱՄՆ-ի Արեւմտեան Թեմի առաջնորդարանում եւ նշանակուել նորակազմ ծովիսերի սպասաւորութեան համակարգող:

2020 թ. յուլիսի 1-ին հոգեւոր ծառայութեան Է նշանակուել Անապատի Ս. Կարապետ Հայց. Եկեղեցում (Rancho Mirage, CA)՝ որպէս հոգեւոր մատակարար հովիւ:

Գեորգ Սարկաւազն ամուսնացած է Ռուզան Գեորգեանի հետ եւ ունի երեք զաւակ:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԳԻՐՔԵՐԸ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ ՄԵՋ ՈՐՏԵՐՆ Է ԳՐՈՒԱԾ



(Գրքի առաջին հրատարակությունը լոյս տեսաւ արեւմտահայերէնով՝ 2010 թուականին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Գրքի երկրորդ՝ յաւելումներով հրատարակութիւնը լոյս տեսաւ արեւելահայերէնով՝ 2015 թուականին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում):

Սոյն գիրքը հանգամանալի պատասխաններ է տալիս այն ամենատարածուած հարցերին եւ առարկութիւններին, որոնք այլադաւան քարոզիչները եւ արդիականացման կողմնակիցներն ուղղում են ուղղափառ հաւատացեալներին՝ Եկեղեցու վարդապետութեան եւ աւանդութեան վերաբերեալ: Երբ այլադաւան քարոզիչները, աստուածաշնչեան համարներ մեջբերելով, փորձում են «ապացուցել», թէ ուղղափառ վարդապետութիւնները աստուածաշնչեան հիմք չունեն, սոյն աշխատութիւնը, հիմնուելով Սուրբ Գրքի եւ Սրբազան Աւանդութեան վրայ, տալիս է հիմնաւոր եւ համոզիչ պատասխաններ՝ նպաստելով Առաքելական Հաւատքի ճշմարիտ ճանաչմանն ու պաշտպանութեանը:

Գիրքը լուսաբանում է աստուածաշնչեան այն համարների ճշմարիտ իմաստը, որոնք յաճախ սխալ են մեկնաբանուում՝ աւանդական, պատմական եւ առաքելական Եկեղեցու վարդապետութիւնը մերժելու կամ խեղաթիւրելու նպատակով: Միաժամանակ այն ցոյց է տալիս, թէ ինչպէս կարելի է Սուրբ Գրքի ճշմարիտ մեկնութեան միջոցով մարդկանց առաջնորդել դէպի Եկեղեցի կամ վերադարձնել Եկեղեցու գիրկը: Հիմնուելով քրիստոնէական ճշմարիտ Աւանդութեան վրայ՝ գիրքը ներկայացնում է Սուրբ Գրքի ուղղափառ ընկալումը եւ ցոյց տալիս, թէ ինչպէս կարելի է առաւել արդիւնաւետ կերպով ճանաչել, ներկայացնել եւ փոխանցել Ուղղափառ Հաւատքի հոգեւոր ու աստուածաբանական հարուստ ժառանգութիւնը:

Հոգեւոր զարթոնքի բաղձանքով պատրաստուած լուրջ աշխատասիրութիւն է սոյն հատորը, որի նպատակն է լուսաբանել եւ դէպի ճշմարիտ հաւատք առաջնորդել շփոթութեան ու մոլորութեան մատնուած Լուսաւորչի հոգեւոր զաւակներին: Հիմնուած լինելով Սուրբ Գրքի եւ Սրբազան Աւանդութեան վրայ՝ աշխատութիւնը հարուստ է աստուածաբանական, հայրաբանական եւ պատմական տուեալներով, որոնք ընթերցողին հնարաւորութիւն են տալիս առաւել խորապէս ճանաչելու Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու վարդապետութիւնն ու հոգեւոր ժառանգութիւնը:

Սոյն գրքի ընթերցումը կարող է օգտակար լինել ոչ միայն հաւատացեալներին, այլեւ կրօնական եւ աստուածաբանական հարցերով հետաքրքրուող բոլոր ընթերցողներին: Յոյս ունենք, որ այն իր համեստ նպաստը կը բերի այս բնագաւառում առկայ պակասը լրացնելուն՝ հայ ընթերցողին եւ հայ ընտանիքին տրամադրելով օգտակար ու ուսանելի տեղեկութիւններ եւ ծառայելով մեր սուրբ հաւատքի առաւել խոր ճանաչմանն ու Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգեւոր եւ վարդապետական ժառանգութեան պահպանմանն ու փոխանցմանը:

ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ ՍԳԱԴՈՐՆԵՐԻՆ ԵՒ ՅՈՒՍԱԴՐՈՒԹԻՒՆ ՎՇՏԱՅԱՐՆԵՐԻՆ



(Գրքի առաջին հրատարակությունը լոյս տեսաւ արեւմտահայերէնով՝ 2011 թուականին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Գրքի երկրորդ՝ յաւելումներով հրատարակությունը լոյս տեսաւ արեւելահայերէնով՝ 2015 թուականին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում):

Սոյն գիրքը հաւատացեալին մանրակրկիտ եւ հանգամանալի պատասխաններ է տալիս մահուան վերաբերեալ ամենատարածուած հարցերին՝ ներկայացնելով յստակ ցուցումներ եւ լուսաբանութիւններ այն մասին, թէ ինչպէս պէտք է մխիթարել սիրելիներ կորցրած սգաւորներին, զօրակցել վշտահարներին եւ հոգեւոր մխիթարութիւն պարգեւել նրանց, ովքեր գտնուում են կեանքի վերջին հանգրուանում՝ պատրաստուելով անցնելու այս աշխարհից դէպի յաւիտենականութիւն:


Այս աշխատութիւնը օգտակար ձեռնարկ է բոլոր նրանց համար, ովքեր կոչուած են հոգեւորապէս ուղեկցելու եւ զօրակցելու հարազատի կամ բարեկամի կորուստը սգացողներին, ինչպէս նաեւ նրանց, ովքեր գտնուում են «մահուան ստուերի հովտում» եւ մօտենում են իրենց երկրային կեանքի ակարտին: Այն ներկայացնում է գործնական եւ հոգեւոր օգտակար ուղիներ՝ մխիթարելու թէ՛ ինքներս մեզ եւ թէ՛ նրանց, ովքեր ապրում են կորստի ցաւը կամ կարիք ունեն հոգեւոր ուղեկցութեան եւ քրիստոնէական յոյսի ամրապնդման:

Գրքում ներկայացուած աստուածաբանական հիմնաւորումները, Սուրբ Գրքի վկայութիւնները եւ բազմաթիւ գործնական ցուցումները օգնում են առաւել խորապէս ըմբռնելու մահուան խորհուրդը քրիստոնէական հաւատքի լոյսի ներքոյ եւ յստակ պատասխաններ գտնելու մարդու կեանքի, մահուան ու յաւիտենականութեան վերաբերեալ հարցերին: Ուստի այն կարող է օգտակար

ձեռնարկ լինել թե՛ հոգեւորականների եւ թե՛ բոլոր նրանց համար, ովքեր կոչուած են մխիթարելու վշտացեալներին, զօրակցելու սգաւորներին եւ քրիստոնէական հաւատքի ու յոյսի լոյսով առաջնորդելու «մահուան ստուերի հովտով» անցնողներին:

Յոյս ունենք, որ այս աշխատութիւնը իր համեստ նպաստը կը բերի մահուան խորհուրդի առաւել խոր ճանաչմանը՝ օգնելով ընթերցողին վշտի եւ կորստի մէջ գտնելու մխիթարութիւն, մահուան դիմաց՝ քրիստոնէական յոյս, իսկ յաւիտենական կեանքի հանդէպ՝ հաստատուն հաւատք՝ ի Քրիստոս Յիսուս:

«ՀԱՅՐ ՄԵՐ»-Ի ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԸՍՏ Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑՈՒ “OUR FATHER” COMMENTARIES ACCORDING TO ST. GREGORY OF DATEV”



(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2012)

Սոյն աշխատութիւնը նուիրուած է Տէրունական աղօթքի՝ «Հայր մեր»-ի խորախորհուրդ մեկնութեանը՝ ըստ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու մեծ վարդապետ Սուրբ Գրիգոր Տաթեւացու աստուածաբանական եւ մեկնողական հարուստ ժառանգութեան: «Հայր մեր»-ը, որպէս մեր Տէր Յիսուս Քրիստոսի կողմից Իր աշակերտներին ականդուած աղօթք, քրիստոնէական հաւատքի եւ հոգեւոր կեանքի կարեւորագոյն հիմքերից մէկն է, որի իւրաքանչիւր խօսքն ու խնդրանքը պարունակում է աստուածաբանական խոր իմաստ եւ հոգեւոր անսպառ հարստութիւն:

Գրքում ներկայացուած են Սուրբ Գրիգոր Տաթեւացու՝ «Հայր մեր»-ին նուիրուած երկու մեկնութիւնները՝ գրաբար բնագրով, աշխարհաբար փոխադրութեամբ եւ անգլերէն թարգմանութեամբ: Գեորգ Սարկաւազ Գեորգեանը գրաբար բնագրերը վերածել է աշխարհաբարի եւ թարգմանել անգլերէնի՝ նպատակ ունենալով Տաթեւացու աստուածաբանական մտքի խորութիւնն ու Տէրունական աղօթքի հոգեւոր բովանդակութիւնն առաւել մատչելի դարձնել թե՛ հայ եւ թե՛ օտարալեզու ընթերցողներին: Այսպէս ընթերցողը հնարաւորութիւն է ստանում առաւել խորապէս ըմբռնելու Տէրունական աղօթքի իւրաքանչիւր խօսքի, խնդրանքի եւ արտայայտութեան հոգեւոր ու աստուածաբանական իմաստը: Միաժամանակ աշխատութիւնը ընթերցողին հաղորդակից է դարձնում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հայրաբանական, աստուածաբանական եւ մեկնողական հարուստ ժառանգութեանը՝ բացայայտելով աղօթքի այն խորքերը, որոնք հաւատացեալին առաջնորդում են Աստծու հետ առաւել կենդանի հաղորդակցութեան, հոգեւոր աճի եւ հաւատքի զօրացման:

Սոյն աշխատութիւնը կարող է օգտակար լինել թէ՛ հոգեւորականների եւ թէ՛ բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են առաւել խորապէս ճանաչել եւ հասկանալ Տէրունական աղօթքի անսպառ խորհուրդը: Յոյս ունենք, որ այն իր համեստ նպաստը կը բերի Սուրբ Գրիգոր Տաթեւացու հոգեւոր եւ աստուածաբանական ժառանգութեան առաւել լայն ճանաչմանն ու տարածմանը՝ օգնելով ընթերցողին «Հայր մեր»-ը ոչ միայն արտասանել շուրթերով, այլեւ ըմբռնել մտքով, ընդունել սրտով եւ ապրել իր առօրեայ քրիստոնէական կեանքում:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԴԻՎԿԻԶՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ



(Գրքի առաջին հրատարակութիւնը լոյս տեսաւ արեւմտահայերէնով՝ 2013 թուականին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Գրքի երկրորդ՝ յաւելումներով հրատարակութիւնը լոյս տեսաւ արեւելահայերէնով՝ 2016 թուականին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում):



Սոյն գիրքը ներկայացնում է դիակիզման խնդրի նկատմամբ ուղղադաւան աւանդական մօտեցումը՝ ցոյց տալով, որ դիակիզումը աստուածաշնչեան հիմք չունի եւ իր խորքում արմատաւորուած է մարդկային մարմնի հանդէպ հեթանոսական արհամարհական վերաբերմունքի մէջ: Քրիստոնեական վարդապետութեան համաձայն՝ մարդկային մարմինը Աստծու արարչագործութեան մասն է եւ Սուրբ Հոգու տաճար, ուստի արժանի է յարգանքի եւ պատշաճ վերաբերմունքի ոչ միայն երկրային կեանքի ընթացքում, այլեւ մահուանից յետոյ: Քրիստոնեական թաղման աւանդութիւնը հիմնուած է մեր Տէր Յիսուս Քրիստոսի օրինակի վրայ, որի մարմինը երկիւղածութեամբ եւ մեծ պատուով թաղուեց եւ երրորդ օրը յարութիւն առաւ: Նոյն յարութեան յոյսով հանգուցեալի մարմինը եկեղեցական արարողութեամբ եւ յատուկ աղօթքներով յանձնուում է հողին՝ համաձայն աստուածաշնչեան խօսքի. «Հող էիր եւ հող պիտի դառնաս» (Ծննդ. 3.19)՝ հայցելով Աստծու ողորմութիւնը, մեղքերի թողութիւնն ու քաւութիւնը եւ յաւիտեական կեանքի արժանացումը:

Հիմնուելով Սուրբ Գրքի, քրիստոնեական վարդապետութեան եւ եկեղեցու Սրբազան Աւանդութեան վրայ՝ աշխատութիւնը աստուածաբանական տեսանկիւնից հանգամանօրէն լուսաբանում է մարդկային մարմնի արժեքի, քրիստոնեական թաղման եւ յարութեան ընկալումը, ինչպէս նաեւ ննջեցեալների

հանդեպ պատշաճ յարգանքի արտայայտման կարեւորութիւնը: Միաժամանակ այն անդրադառնում է դիակիզման տարածուող սովորութեանը՝ ներկայացնելով դրա նկատմամբ Եկեղեցու դիրքորոշման աստուածաշնչեան, աստուածաբանական եւ աւանդական հիմքերը:

Սոյն աշխատութիւնը կարող է օգտակար ուղեցոյց լինել թէ՛ հոգեւորականների եւ թէ՛ հաւատացեալների համար՝ օգնելով առաւել խորապէս ըմբռնելու Եկեղեցու ուսուցումը մարդկային մարմնի, մահուան, թաղման եւ յարութեան վերաբերեալ եւ քրիստոնէական հաւատքի լոյսի ներքոյ կողմնորոշուելու կեանքի աւարտին առնչուող այս նուրբ եւ պատասխանատու հարցում:

**“HOW TO FORGIVE THE OFFENSE?” ST. JOHN CHRYSOSTOM,
Selected Homilies
КАК ПРОСТИТЬ ОБИДУ? СВ. ИОАНН ЗЛАТОУСТ
*Избранные беседы***




(Գրքերի հրատարակութիւնները լոյս տեսան արեւմտահայերէնով եւ ռուսերէնով՝ 2014 թուականին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում):

Ինչպէ՞ս հանդուրժել եւ ներել ուրիշների թերութիւններն ու սխալները: Ինչպէ՞ս համբերութեամբ տանել մեզ հասցուած վիրաւորանքը, նախատինքն ու գրպարտութիւնը: Ինչպէ՞ս յաղթահարել մեր բարկութիւնը, ներել մեր հանդէպ մեղանշողներին եւ հաշտուել նրանց հետ: Ինչո՞ւ երբեմն այնքան դժուար է ներել ուրիշներին, երբ ներողամտութիւնն Աստծուց ներում ստանալու եւ հոգեւոր խաղաղութիւն գտնելու կարեւորագոյն ճանապարհներից մէկն է:

Ներման, ներողամտութեան եւ հաշտութեան վերաբերող այս եւ նմանատիպ հարցերի պատասխանները գտնում ենք չորրորդ դարի եկեղեցու մեծ Հայրերից Սուրբ Յովհան Ոսկեբերանի հոգեշունչ եւ սքանչելի քարոզներում: Բարեշնորհ Գեորգ Սարկաւազ Գեորգեանն իր անգլերէն եւ ռուսերէն լեզուներով հրատարակուած հատորներում ընթերցողին ներկայացնում է Սուրբ Յովհան Ոսկեբերանի քարոզներից ընտրուած եւ ներողամտութեան գաղափարի շուրջ համախմբուած ուսուցումներ՝ բացայայտելով դրանց հոգեւոր եւ բարոյական խոր իմաստը:

Սոյն աշխատութիւնն ընթերցողին առաջնորդում է ոչ միայն ներելու իրեն հասցուած վիրաւորանքներն ու անարդարութիւնները, այլեւ քննելու սեփական անձն ու հոգին, անդրադառնալու իր թերութիւններին ու մեղքերին եւ ապաշխարութեամբ ու հոգեւոր նորոգութեամբ ընթանալու դէպի հաշտութիւն, ներքին խաղաղութիւն եւ փրկութիւն: Սուրբ Յովհան Ոսկեբերանի հայրական խրատներն ու հոգեշունչ ուսուցումները յիշեցնում են, որ ճշմարիտ ներողամտութիւնը քրիստոնէական սիրոյ կարեւորագոյն արտայայտութիւններից մէկն է եւ դէպի Երկնքի Արքայութիւն առաջնորդող ճանապարհն է:

ԿԻՆԸ ՆՈՐ ՈՒԽՏԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ



(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2017)

Գիրքը նուիրուած է Նոր Ուխտի Եկեղեցում կնոջ դերի, կոչման եւ առաքելութեան վերաբերեալ մի շարք կարեւոր աստուածաբանական, բարոյական եւ հովուական հարցերի լուսաբանմանը: Որպէս հիմնադիր ունենալով Սուրբ Գիրքը, Եկեղեցու Սրբազան Աւանդութիւնն ու հայրաբանական ժառանգութիւնը՝ հեղինակը ներկայացնում է կնոջ աստուածատուր արժէքն ու կոչումը Եկեղեցում, ընտանիքում եւ հասարակական կեանքում:

Աշխատութիւնը միաժամանակ անդրադառնում է մեր ժամանակների մի շարք արդիական երեւոյթների եւ մարտահրաւերների՝ քրիստոնեական ֆեմինիզմին, կանանց քահանայագործութեան խնդրին, ամուսնական եւ ընտանեկան յարաբերութիւններին, յղիութեան արհեստական ընդհատմանը, Եկեղեցում գլխաշոր գործածելու խորհրդաբանութեանը մայրութեանը, անզաւակութեանը, խառնամուսնութեանը եւ կնոջ հոգեւոր ու բարոյական կեանքին առնչուող այլ հարցերի:

Սոյն հատորի նպատակն է ընթերցողին առաւել խորապէս հաղորդակից դարձնել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու վարդապետութեանը՝ օգնելով քրիստոնեական հաւատքի լոյսի ներքոյ ճանաչելու կնոջ դերն ու առաքելութիւնը եւ դիմագրաւելու ժամանակակից մարտահրաւերները՝ պահպանելով ու կենսաւորելով քրիստոնեական հոգեւոր, բարոյական եւ ընտանեկան արժէքները: Աշխատութիւնը կարող է օգտակար լինել թե՛ հոգեւորականների եւ թե՛ բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրուած են Եկեղեցում, ընտանիքում եւ հասարակական կեանքում կնոջ դերի ու կոչման վերաբերեալ հարցերով:

ՅԵԼՈՈՒՆԸ՝ ՉՈՒԱՐԾԱ՞ՆՔ, ԹԵ՞ ԴԻՒԱԴԱՇՏՈՒԹԻՒՆ



(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2018)


Սոյն աշխատութիւնը նուիրուած է Յելոուիսի ծագման, պատմութեան, դիւապաշտական խորհրդանշանների եւ դրա հետ առնչուող գաղտնագիտական երեւոյթների ուսումնասիրութեանը: Այն միաժամանակ պատասխանում է շատերին յուզող հարցերին. արդե՞օք քրիստոնեան կարող է տօնել Յելոուիսը՝ առանց իր հաւատքին հակասելու, ի՞նչ հոգեւոր վտանգներ է այն պարունակում, ի՞նչ է սովորեցնում Սուրբ Գիրքը նման երեւոյթների մասին եւ ինչպե՞ս պետք է քրիստոնեան վերաբերի ու արծագանքի դրանց:

Հիմնուելով Սուրբ Գրքի, Եկեղեցու վարդապետութեան, պատմական վկայութիւնների եւ տարբեր աղբիւրների վրայ՝ հեղինակը հանգամանօրէն ներկայացնում է Յելոուիսի ծագման պատմութիւնն ու դիւապաշտական խորհրդանշանները, անդրադառնում ժամանակակից սատանայապաշտների եւ գաղտնագետների հետ դրա առնչութիւններին, ինչպէս նաեւ լուսաբանում գաղտնագիտութեան վտանգներն ու հոգեւոր հետեւանքները: Առանձին ուշադրութիւն է դարձնում Յելոուիսի նկատմամբ Սուրբ Գրքի եւ Եկեղեցու դիրքորոշմանը, ինչպէս նաեւ ժամանակակից աշխարհում նեօհեթանոսութեան ու գաղտնագիտութեան զարթօնքին՝ աշխարհի վախճանի մասին քրիստոնեական ուսուցման լոյսի ներքոյ:

Աշխատութեան նպատակն է ընթերցողին օգնել առաւել խորապէս ճանաչելու ժամանակակից աշխարհում յաճախ անմեղ զուարճանքի եւ սովորական տօնախմբութեան կերպարանքով ներկայացուող Յելոուիսի իրական ծագումը, հոգեւոր բովանդակութիւնն ու վտանգները եւ դրանք գնահատելու Սուրբ Գրքի ու քրիստոնեական հաւատքի լոյսի ներքոյ: Սոյն հատորը կարող է օգտակար լինել թե՛ հոգեւորականների եւ թե՛ բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են առաւել

հիմնաւոր կերպով ճանաչել Հելլոփինի, նեօհեթանոսութեան եւ գաղտնագիտութեան եութիւնը, զերծ մնալ դրանց հոգեւոր վտանգներից եւ հաստատուն մնալ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հաւատքի ու վարդապետութեան մէջ:

ԸՆԴԴԵՄ ՆՐԱՆՑ, ՈՎԷՐ ԳԱՅԹԱԿՐՈՒՄ ԵՆ ԱՄԲԱՐԻՇՏՆԵՐԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՉԱՅՐԱՆՈՒՄ ԱՐԴԱՐՆԵՐԻ ԴԺԲԱՏՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ




(«Մեկնարկ», ՍՊՀ-ի տպարան, Երեւան, 2021)

Սոյն աշխատութիւնը նուիրուած է մարդկային կեանքի ամենախոր եւ յաճախ դժուարըմբռնելի հարցերից մէկի լուսաբանմանը. ինչո՞ւ են արդարները յաճախ ընկնում փորձանքների մէջ կամ վաղաժամ մեռնում, իսկ ամբարիշտները վայելում են բարեկեցութիւն եւ հանգստութիւն: Գրքում ներկայացուած խորհրդածութիւնները պատասխաններ են տալիս հաւատացեալների միտքն ու հոգին յուզող այս եւ նմանատիպ հարցերին՝ փորձութիւնների ու տառապանքների հոգեւոր իմաստի, Աստծու նախախնամութեան, արդարութեան եւ երկրային կեանքի անցողիկութեան վերաբերեալ:

Հիմնուելով Սուրբ Գրքի վկայութիւնների եւ եկեղեցու Սուրբ Հայրերի, յատկապէս Սուրբ Յովհան Ոսկեբերանի ուսուցումների վրայ՝ հեղինակը ձգտում է Աստծու խօսքի լոյսով առաջնորդել ընթերցողին՝ օգնելով նրան չգայթակղուելու ամբարիշտների ժամանակաւոր բարեկեցութեամբ, չլուսահատուելու կեանքի նեղութիւնների եւ դժուարութիւնների մէջ, այլ փորձութիւններն ընդունելու հաւատքով, համբերութեամբ եւ Աստծու նախախնամութեան հանդէպ վստահութեամբ: Աստուածաշնչեան վկայութիւնները, Սուրբ Հայրերի հոգեշահ պատգամներն ու իմաստալից պատմութիւնները նպաստում են առաւել խորապէս ըմբռնելու տառապանքի խորհուրդը եւ երկրային կեանքը դիտելու յաւիտենականութեան լոյսի ներքոյ:

Աշխատութիւնը կարող է օգտակար լինել բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են առաւել խորապէս ճանաչել Աստծու նախախնամութեան խորհուրդը, կեանքի փորձութիւնների մէջ ամրանալ հաւատքով եւ յոյսով ու իրենց հայեացքն ուղղել դէպի յաւիտենական կեանքն ու Երկնքի Արքայութիւնը:

ԻՆՉԻ՞ ՄԱՍԻՆ ԵՆ ԼՈՌԻՄ ՄԱՍՈՆՆԵՐԸ. Մասոնական կրօնաւորութեան գաղտնիքները




(«Մեկնարկ», ՄՊՀ-ի տպարան, Երեւան, 2021)

Գիրքը նուիրուած է մասոնութեան ծագման, կրօնական բնոյթի, գաղտնի ուսմունքների եւ քրիստոնէական հաւատքի հետ դրանց առնչութեան ուսումնասիրութեանը: Շատերին հետաքրքրում է, թէ ի՞նչ է մասոնութիւնը եւ ի՞նչ է թաքնուած նրա փակ դռների ետեւում: Արդե՞օք մասոնութիւնը կրօն է, եւ եթէ այո, ապա ինչպե՞ս է այն առնչուում քրիստոնէական հաւատքին, ի՞նչ է սովորեցնում Յիսուս Քրիստոսի, փրկութեան եւ հանդերձեալ կեանքի մասին, արդե՞օք ընդունելի է քրիստոնէայի անդամակցութիւնը մասոնական օթեակին, եւ ի՞նչ նշանակութիւն ունեն մասոնական խորհրդանիշներն ու ծիսակարգերը:

Հիմնուելով մասոնական հեղինակաւոր աղբիւրների, պատմական փաստաթղթերի եւ քրիստոնէական վարդապետութեան վրայ՝ հեղինակը քննում է մասոնութեան արտաքին մարդասիրական ու բարեգործական կերպարի ներքոյ թաքնուած կրօնական եւ գաղափարական համակարգը: Գրքում լուսաբանւում են մասոնութեան գաղտնապահութիւնն ու երդումները, խորհրդապաշտութիւնն ու աստուածաբանութիւնը, Քիրամ Աբիֆի (Hiram Abiff) առասպելը, փրկութեան վերաբերեալ ուսմունքները, ինչպէս նաեւ մասոնութեան առնչութիւնները Սուրբ Գրքի, Եկեղեցու եւ գաղտնագիտութեան հետ: Առանձնայատուկ ուշադրութիւն է դարձնում այն հարցին, թէ ինչո՞ւ ոմանք պնդում են, որ մասոնութիւնը կրօն չէ, մինչդեռ մասոնական հեղինակաւոր աղբիւրներն այն ներկայացնում են որպէս կրօնական համակարգ:

Աշխատութեան նպատակն է պատասխանել մասնութեան վերաբերեալ այս եւ բազմաթիւ այլ հարցերի՝ օգնելով ընթերցողին առաւել հիմնաւոր կերպով ճանաչելու դրա եութիւնն ու ուսմունքները եւ քրիստոնեական հաւատքի լոյսի ներքոյ գնահատելու մասնութեան ու Առաքելական Եկեղեցու վարդապետութեան միջեւ առկայ հիմնարար տարբերութիւնները:

ԳԼԽԱՇՈՐ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ




(«Մեկնարկ», ՄՊՀ-ի տպարան, Երեւան, 2022)

Սոյն աշխատութիւնը նուիրուած է Եկեղեցում կանանց կողմից գլխաշոր գործածելու առաքելական աւանդութեան հոգեւոր, աստուածաբանական եւ խորհրդաբանական իմաստի լուսաբանմանը: Ցաւօք, ժամանակի ընթացքում այս բարեպաշտական սովորութիւնը հետզհետէ կորցրել է իր երբեմնի գործածութիւնն ու նշանակութիւնը: Թէեւ շատ հաւատացեալներ շարունակում են յարգել եւ պահպանել այն, իսկ ուրիշները, չճանաչելով դրա աստուածաշնչեան հիմքն ու հոգեւոր խորհուրդը, դժուարանում են ըմբռնել, թէ ինչո՞ւ է կինը կոչուած աղօթքի եւ Եկեղեցական արարողութիւնների ժամանակ ծածկելու իր գլուխը:

Հիմնուելով Պօղոս Առաքեալի՝ Կորնթացիներին ուղղուած առաջին նամակի 11-րդ գլխի 1-16 համարների վրայ՝ հեղինակը հանգամանօրէն մեկնաբանում է գլխաշոր գործածելու վերաբերեալ առաքելական ուսուցումը եւ լուսաբանում դրա գլխաւոր պատճառներն ու խորհրդաբանական նշանակութիւնը: Գրքում մասնաւորապէս քննում են առաքելական Աւանդութեան, հոգեւոր գլխաւորութեան եւ հնազանդութեան, տղամարդու եւ կնոջ աստուածադիր կոչման, աղօթքի ժամանակ գլխաշոր գործածելու, հրեշտակների ներկայութեան, ինչպէս նաեւ Եկեղեցու հնագոյն սովորութեան վերաբերեալ հարցերը:

Սոյն հատորի նպատակն է ընթերցողին օգնել առաւել խորապէս ճանաչելու գլխաշոր գործածելու աւանդութեան ոչ միայն արտաքին դրսեւորումը, այլեւ դրա աստուածաշնչեան, հոգեւոր եւ խորհրդաբանական բովանդակութիւնը՝ այն ներկայացնելով որպէս Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու առաքելահաստատ աւանդութեան եւ աղօթական կեանքի արտայայտութիւն:

Ի՞ՆՉ ԵՆ ՀԱՆԳՈՒՑԵԱԼԻ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐԻ ԻՄԱՍՏՆԵՐԸ WHAT IS THE MEANING OF THE REMEMBRANCE DAYS FOR THE DEAD?




(Պըրբանք, 2022)

Սոյն գիրքը կը ներկայացնէ Հայ Եկեղեցւոյ մէջ ննջեցեալներու յիշատակութեան օրերու՝ Այգուցի, Եօթնօրեքի, Քառասունքի եւ Տարելիցի հոգեւոր ու խորհրդաբանական իմաստները: Հեղինակը կը բացատրէ, թէ ինչո՞ւ թաղման յաջորդ առաւօտ նախ կանայք կու գան գերեզման, ապա՝ տղամարդիկ՝ աղօթելու եւ Յարութեան յոյսով հոգեպէս մխիթարուելու ու ուրախանալու, ինչպէս իւրաքանչիւր կանայք առաջինը եկան Քրիստոսի գերեզման, արժանացան Յարութեան աւետիսին, եւ ապա առաքեալները:

Գրքին մէջ հանգամանօրէն լուսաբանուած են նաեւ Եօթնօրեքի, Քառասունքի եւ Տարելիցի հաստատման պատճառներն ու խորհուրդները, ննջեցեալներու համար աղօթքի, Սուրբ Պատարագի, հոգեհանգստեան արարողութեան եւ ողորմութեան նշանակութիւնը, ինչպէս նաեւ Սուրբ Չատկի ու Խաչվերացի տօներուն եւ Քառասունքի առնչութեան վերաբերեալ հարցերը: Գեորգ Սարկաւազ Գեորգեան իր բացատրութիւնները կը հիմնաւորէ Սուրբ Գրքի վկայութիւններով, Եկեղեցւոյ Հայրերու եւ վարդապետներու ուսուցումներով՝ յատկապէս Սուրբ Գրիգոր Տաթեւացիի աստուածաբանական մեկնութիւններով՝ ընթերցողին առաջնորդելով մահուան խորհուրդը դիտելու Քրիստոսի Յարութեան, յաւիտենական կեանքի եւ փրկութեան յոյսի լոյսին ներքոյ:

ԵԿԵՂԵՑԻ ՅԱՃԱԽԵԼՈՒ ՎԱՐՈՒԵԼԱԿԱՐԳԸ CONDUCT WHILE ATTENDING CHURCH




(Պրորբանք, 2022)

Իւրաքանչիւր քրիստոնեայի պարտքն է յաճախել եկեղեցի, յատկապէս կիրակի եւ տօնական օրերին՝ մասնակցելու Սուրբ Պատարագին եւ եկեղեցու սրբազան արարողութիւններին: Եկեղեցին «Աղօթքի տուն» եւ Աստծու ներկայութեան սրբազան վայր է, ուստի այնտեղ անհրաժեշտ է պահպանել պատշաճ վարք, երկիւղածութիւն եւ հոգեւոր կարգապահութիւն:

Սոյն գրքոյկը ներկայացնում է եկեղեցի յաճախելու վարուելակարգի հիմնական կանոնները՝ անդրադառնալով Տաճար մտնելու եւ այնտեղ գտնուելու պատշաճ կերպին, հագուստին, լուրձեան եւ աղօթական կեդրոնացման պահպանմանը, Սուրբ Պատարագին մասնակցութեանը, խաչակնքուելուն, մոմավառութեանը, Սուրբ Հաղորդութեանը մօտենալուն, «Ողջոյն»-ի փոխանցմանը եւ հոգեւորականների նկատմամբ պատշաճ վերաբերմունքին: Այս օգտակար հրատարակութեան նպատակն է օգնել հաւատացեալին առաւել գիտակից եւ երկիւղած մասնակցութիւն ունենալու եկեղեցական արարողութիւններին, պահպանելու Տաճարի սրբազան մթնոլորտը եւ Աստծու տնից հեռանալու հոգեւորապէս նորոգուած ու աստուածային շնորհներով լցուած:

ԻՆՉՈ՞Ւ ԵՆՔ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՄՈՍ ՎԱՌՈՒՄ WHY DO WE LIGHT A CANDLE IN THE CHURCH?




(Տպագրուած է «Red Point» ՄՊԸ-ի տպարանում, Երեւան, 2023)

Սոյն գրքոյկը նուիրուած է եկեղեցական մոմավառութեան ծագման, աստուածաշնչեան հիմքերի եւ հոգեւոր ու խորհրդանշական բազմաբովանդակ իմաստների լուսաբանմանը: «Ինչո՞ւ ենք մոմ վառում եկեղեցում» հարցն իր տարբեր դրսեւորումներով յաճախ է արծարծւում հաւատացեալների կողմից եւ կարիք ունի պատշաճ հոգեւոր ու աստուածաբանական լուսաբանման: Հիմնուելով Սուրբ Գրքի վկայութիւնների, Եկեղեցու Սրբազան Աւանդութեան եւ Սուրբ Հայրերի ուսուցումների վրայ՝ հեղինակը հանգամանօրէն ներկայացնում է այս հնաւանդ բարեպաշտական սովորութեան իմաստն ու նշանակութիւնը՝ առաջնորդուելով նաեւ սաղմոսերգոյի խօսքով. «Քո խօսքը ճրագ է իմ ոտքերի համար...» (Սղմ. 119.105):

Աշխատութեան մեջ ներկայացւում է մոմի լոյսի եւ կրակի խորհրդաբանութիւնը՝ որպէս Աստծու ներկայութեան, Զրիստոսի՝ աշխարհի Լոյսի, հաւատքի, աղօթքի, սիրոյ, զոհաբերութեան, ապաշխարութեան, հոգեւոր մաքրութեան եւ յարութեան լոյսի արտայայտութիւն: Գրքոյկն անդրադառնում է նաեւ մոմավառութեան գործնական կողմերին՝ բացատրելով, թէ ինչպէս եւ ի՞նչ հոգեւոր տրամադրութեամբ պէտք է մոմ վառել, ում համար կարելի է աղօթել, ինչո՞ւ էականը մոմերի քանակը կամ չափը չէ, եւ ինչո՞ւ մոմավառութիւնը չի կարող փոխարինել Սուրբ Պատարագին, Եկեղեցու խորհուրդներին եւ քրիստոնէական կեանքին գործուն մասնակցութեանը:

Մատչելի եւ ուսուցողական բացատրությունների միջոցով սոյն հատորն ընթերցողին օգնում է մոմավառութիւնն ընկալելու ոչ միայն որպէս արտաքին ծիսական գործողութիւն, այլեւ որպէս կենդանի հաւատքի, աղօթքի եւ Աստծու հանդէպ նուիրումի արտայայտութիւն: Գրքոյկում ներկայացուած հոգեւոր լուսաբանութիւնները կարող են օգտակար լինել հաւատացեալներին՝ առաւել խորապէս ըմբռնելու մոմավառութեան խորհուրդը, իրենց սրտերում վառ պահելու հաւատքի լոյսը եւ «Քրիստոսի Լոյսի մէջ» ընթանալու դէպի հոգեւոր նորոգութիւն ու փրկութիւն:

ՀԱՐՑԵՐ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ



(Տպագրուած է «Red Point» ՍՊԸ-ի տպարանում, Երեւան, 2023)

Սոյն աշխատութիւնը Գեորգ Սարկաւագ Գեորգեանի ջատագովական երկերի շարքի առաջին հատորն է՝ նուիրուած Սուրբ Մկրտութեան խորհուրդի աստուածաշնչեան, աստուածաբանական եւ հայրաբանական լուսաբանութեանը: Հարց ու պատասխանի մատչելի ձեւով հեղինակը, հիմնուելով Սուրբ Գրքի վկայութիւնների եւ Եկեղեցու Հայրերի ուսուցումների վրայ, պարզաբանում է Մկրտութեան վերաբերեալ բազմաթիւ հարցեր ու թիրուբնումներ եւ ներկայացնում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու վարդապետական ուսուցումը:


Գրքում մասնաւորապէս քննուում են Մկրտութեան անհրաժեշտութիւնը, ջրի եւ Սուրբ Հոգու ներգործութիւնը, Դրոշմի խորհուրդի նշանակութիւնը, Մկրտութեան եւ փրկութեան փոխարաբերութիւնը, վերստին ծննդեան խորհուրդը, կրկնամկրտութեան անընդունելիութիւնը, հաւատի եւ Մկրտութեան կապը, մանուկների Մկրտութեան աստուածաշնչեան ու հայրաբանական հիմքերը, կնքաօր ընտրութեան նշանակութիւնը, ինչպէս նաեւ Մկրտութեան վերաբերեալ այլ կարեւոր հարցեր:

Աշխատութիւնը ցոյց է տալիս, որ Սուրբ Մկրտութիւնը սոսկ արտաքին արարողութիւն կամ խորհրդանշական գործողութիւն չէ, այլ Քրիստոսով վերստին ծննդեան, մեղքերից մաքրագործման, Աստծու որդեգիր դառնալու եւ Եկեղեցուն անդամակցելու սրբազան խորհուրդ: Ուստի գիրքը կարող է օգտակար ձեռնարկ լինել թէ՛ հոգեւորականների եւ թէ՛ բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են առաւել խորապէս ճանաչել Սուրբ Մկրտութեան խորհուրդը, ըմբռնել Եկեղեցու

վարդապետական ուսուցումը եւ հիմնաւոր պատասխաններ գտնել
քրիստոնէական հաւատքի վերաբերեալ բարձրացուող հարցերին:

ԻՆՉՈՒՒ ԵՆՔ ԲԱՅԱՆԱՅԻՆ “ՀԱՅՐ” ԿՈՉՈՒՄ

WHY DO WE CALL A PRIEST “FATHER”



(Տպագրուած է «Red Point» ՄՊԸ-ի տպարանում, Երեւան, 2024)


Սոյն աշխատութիւնը նուիրուած է հոգեւոր հայրութեան խորհրդի եւ քահանային «հայր» կոչելու եկեղեցական աւանդութեան աստուածաշնչեան ու աստուածաբանական հիմքերի լուսաբանմանը: Հեղինակը, մեկնելով Քրիստոսի՝ «Երկրի վրայ ոչ մէկին ձեզ հայր մի՛ կոչէք» (Մատթ. 23.9) խօսքի ճշմարիտ իմաստը, Սուրբ Գրքի բազմաթիւ վկայութիւններով պատասխանում է այն առարկութիւններին, որոնք յաճախ բարձրացւում են հոգեւորականներին «հայր», «տէր» եւ «վարդապետ» կոչելու վերաբերեալ: Աշխատութեան մէջ ցոյց է տրուում, որ Քրիստոսի խօսքը դատապարտում է ոչ թէ հոգեւոր հայրութիւնը կամ համապատասխան կոչումների գործածութիւնը, այլ հպարտութիւնը, փառասիրութիւնն ու պատուի ձգտումը:

Հիմնուելով Հին եւ Նոր Կտակարանների վկայութիւնների ու առաքելական ուսուցման վրայ՝ հեղինակը ներկայացնում է հոգեւոր հոր կոչումն ու առաքելութիւնը՝ որպէս Աստուծոյ տրուած ծառայութիւն: Հոգեւորականը կոչուած է Աւետարանի լոյսը տարածելու, իրեն վստահուած հօտը հայրական սիրով խնամելու, ուսուցանելու, մխիթարելու եւ առաջնորդելու դէպի Քրիստոս: Այս իմաստով նա բոլորի համար հայր եւ սպասաւոր է, իսկ հոգեւոր հայրութիւնը՝ ոչ թէ

պատուոյ կոչում, այլ նուիրումի, զոհաբերութեան եւ պատասխանատու ծառայութեան ճանապարհ:

Մատչելի շարադրանքով, սուրբգրային հարուստ վկայութիւններով եւ համոզիչ փաստարկումներով սոյն հատորն ընթերցողին օգնում է առաւել խորապէս ըմբռնելու հոգեւոր հայրութեան խորհուրդը եւ Եկեղեցու հովուական ծառայութեան ճշմարիտ նշանակութիւնը: Այն կարող է օգտակար լինել բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են ճանաչել Եկեղեցու ուսուցումը, փարատել այս հարցի շուրջ առկայ թիրըմբոնումներն ու առարկութիւնները եւ առաւել գիտակից ու լուսաբանուած հաւատքով արժեւորել հոգեւորականի հայրական ծառայութիւնը:

ԻՆՉՈ՞Ւ ԵՆՔ ԽԱՃԱԿՆՔՈՒՄ



(Տպագրուած է «Red Point» ՍՊԸ-ի տպարանում, Երեւան, 2024)

Սոյն աշխատութիւնը Գերգ Սարկալագ Գերգեանի ջատագովական երկերի շարքի երկրորդ հատորն է՝ նուիրուած Սուրբ Խաչի եւ խաչակնքման հոգեւոր, աստուածաշնչեան, աստուածաբանական ու հայրաբանական իմաստի եւ նշանակութեան լուսաբանութեանը: Հիմնուելով Սուրբ Գրքի վկայութիւնների, Սրբազան Աւանդութեան եւ Եկեղեցու Հայրերի ուսուցումների վրայ՝ հեղինակը պարզաբանում է խաչակնքման վերաբերեալ բազմաթիւ հարցեր ու թիրիմբոնումներ եւ ներկայացնում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու վարդապետական ուսուցումը:


Սոյն գրքի միջոցով հաւատացեալը հաղորդակից է դառնում Սուրբ Խաչի խորախորհուրդ նշանակութեանը, ծանօթանում Եկեղեցու Սուրբ Հայրերի մեկնութիւններին, Սուրբ Խաչի զօրութեան բազմազան դրսեւորումներին եւ պատմական վկայութիւններին՝ հարստացնելով իր հոգեւոր գիտելիքները եւ լուսաւորելով միտքն ու հոգին: Գերգ Սարկալագ Գերգեանը ընթերցողին ներկայացնում է խաչակնքման՝ որպէս առաքելական հաւատի խոստովանութեան հակիրճ աղօթքի հոգեւոր խորհուրդն ու աստուածաբանական խորքերը՝ ցոյց տալով, որ այն սոսկ արտաքին շարժում կամ բարեպաշտական սովորութիւն չէ, այլ քրիստոնէական հաւատի կենդանի խոստովանութիւն, Մկրտութեան յիշեցում եւ վերահաստատում, Քրիստոսի չարչարանքներին հաղորդակցութեան

խորհրդանիշ եւ Սուրբ Խաչի փրկարար զօրութեանը ապաւինելու տեսանելի արտայայտութիւն:

Գրքում մասնաւորապէս քննուած են խաչակնքման աստուածաշնչեան եւ առաքելական հիմքերը, Մկրտութեան հետ ունեցած կապը, Քրիստոսի չարչարանքներին հաղորդակցութեան խորհուրդը, խաչակնքման զօրութիւնը՝ ընդդէմ չարի ներգործութիւնների, Աստծու Գառնուկի Արեան եւ Խաչի Նշանի փոխարաբերութիւնը, խաչակնքման խորհրդանշական իմաստներն ու հոգեւոր բարիքները, ինչպէս նաեւ ներկայացուած են խաչակնքման վերաբերեալ առարկութիւնների հիմնաւոր պատասխաններ, պատմական վկայութիւններ եւ ճիշդ խաչակնքուելու կերպը:

Ուստի սոյն աշխատութիւնը կարող է օգտակար ձեռնարկ լինել թե՛ հոգեւորականների եւ թե՛ բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են առաւել խորապէս ճանաչել Սուրբ Խաչի խորհուրդը, ըմբռնել խաչակնքման հոգեւոր եւ աստուածաբանական նշանակութիւնը եւ իրենց առօրեայ կեանքում առաւել գիտակցաբար ապրել ու վկայել Քրիստոսի Խաչի փրկարար զօրութիւնը:

ԲԱՐԵՒՍՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՆՋԵՑԵԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՂՈԹՔԸ



(Տպագրուած է «Red Point» ՄՊԸ-ի տպարանում, Երեւան, 2025)

Սոյն աշխատութիւնը Գեորգ Սարկաւազ Գեորգեանի ջատագովական երկերի շարքի երրորդ հատորն է՝ նուիրուած սուրբերի եւ հրեշտակների բարեխօսութեան վարդապետութեան, ինչպէս նաեւ ննջեցեալների համար աղօթելու աստուածաշնչեան, աստուածաբանական եւ հայրաբանական հիմքերի լուսաբանութեանը: Հիմնուելով Սուրբ Գրքի վկայութիւնների եւ Եկեղեցու Հայրերի ուսուցումների վրայ՝ հեղինակը պարզաբանում է բարեխօսութեան վերաբերեալ տարածուած առարկութիւններն ու թիրըմբումները եւ ներկայացնում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու վարդապետական ուսուցումը:

Գրքում մասնաւորապէս քննուած են Զրիստոսի միակ միջնորդութեան եւ սուրբերի բարեխօսութեան տարբերութիւնը, սուրբերից եւ հրեշտակներից բարեխօսութիւն խնդրելու աստուածաշնչեան հիմքերը, երկնային եւ երկրային Եկեղեցու միութիւնը, սուրբերի աղօթքների նշանակութիւնն ու զօրութիւնը, ինչպէս նաեւ ննջեցեալների համար աղօթելու անհրաժեշտութիւնը, հոգեհանգստեան արարողութեան խորհուրդը, մեռելների յարութեան եւ Զրիստոսի երկրորդ Գալստեան հանդէպ քրիստոնէական հաւատքն ու յոյսը: Աշխատութեան մէջ ներկայացուած են նաեւ Եկեղեցու Հայրերի վկայութիւններն ու ուսուցումները բարեխօսութեան վերաբերեալ:

Աշխատութիւնը ցոյց է տալիս, որ սուրբերի բարեխօսութիւնը չի նսեմացնում Զրիստոսի միակ եւ փրկագործ միջնորդութիւնը, այլ արտայայտում է Զրիստոսի Մարմնի՝ Եկեղեցու անդամների հոգեւոր միութիւնն ու փոխադարձ աղօթքը:

Միաժամանակ գիրքը լուսաբանում է, որ ննջեցեալների համար աղօթելը եկեղեցու դարաւոր անանդութիւնն է եւ մեռելների յարութեան, Քրիստոսի Երկրորդ Գալստեան ու յաւիտենական կեանքի հանդէպ հաւատքի եւ յոյսի արտայայտութիւն: Ուստի գիրքը կարող է ծառայել որպէս գործնական ձեռնարկ թէ՛ հոգեւորականների եւ թէ՛ բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են առաւել խորապէս ճանաչել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ուսուցումը բարեխօսութեան եւ ննջեցեալների համար աղօթքի վերաբերեալ ու հիմնաւոր պատասխաններ գտնել այդ հարցերի շուրջ բարձրացուող առարկութիւններին:

ՊԱՊՆ ՈՒ ՇԱՂԳԱՄԸ

Հեքեաթի քրիստոնեական իմաստը



(Տպագրուած է «Red Point» ՍՊԸ-ի տպարանում, Երեւան, 2025)


«Պապն ու Շաղգամը» պատմութիւնը, թէեւ պարզ, կարճ եւ առաւելաբար մանուկներին ուղղուած հեքեաթ է, սակայն Գեորգ Սարկալազ Գեորգեանն իր աշխատութեան մէջ բացայայտում է նրա խոր հոգեւոր, բարոյական եւ քրիստոնեական իմաստը՝ այն վերածելով հաւատքի ճանաչման եւ հոգեւոր դաստիարակութեան գեղեցիկ միջոցի: Հիմնուելով Սուրբ Գրքի ուսուցումների վրայ՝ հեղինակը հեքեաթի պարզ դրուագների միջոցով լուսաբանում է փոխօգնութեան, հաշտութեան, խաղաղարարութեան, թշնամիների հանդէպ սիրոյ, ներողամտութեան, միասնականութեան եւ հաւաքական աշխատանքի քրիստոնեական արժէքները:

Աշխատութեան մէջ մասնաւորապէս ընդգծւում են ընտանիքի եւ Եկեղեցու միասնականութեան զօրութիւնը, ընդհանուր գործի մէջ իւրաքանչիւր անհատի, նոյնիսկ ամենափոքրի, մասնակցութեան կարեւորութիւնը, ինչպէս նաեւ սեփական կրքերի ու թերութիւնների յաղթահարման հոգեւոր նշանակութիւնը: Հեղինակը ցոյց է տալիս, որ մարդու իւրաքանչիւր բարի գործն ու բարոյական յաղթանակը կարող են իրենց բարերար ազդեցութիւնը թողնել ոչ միայն անհատի, այլեւ ընտանիքի, Եկեղեցու եւ ամբողջ հասարակութեան հոգեւոր կեանքի վրայ:

Հեքեաթի կերպարներն ու իրադարձութիւնները մեկնաբանելով քրիստոնեական հաւատքի լոյսի ներքոյ՝ հեղինակը ընթերցողին առաջնորդում է այն գիտակցութեան, որ հաշտութիւնը, փոխադարձ սերը, համերաշխութիւնը, անձնագոհութիւնը եւ միացեալ ջանքերը անհրաժեշտ են թե՛ երկրային

դժուարությունները յաղթահարելու եւ թէ՛ հոգեւոր կեանքում առաջադիմելու համար: Ուստի սոյն աշխատութիւնը, մատչելի լինելով մանուկներին, միաժամանակ ուսանելի եւ հոգեշահ ընթերցանութիւն կարող է լինել ծնողների, դաստիարակների, հոգեւորականների եւ բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են պարզ հեքեաթի խորքում բացայայտել քրիստոնէական հաւատքի եւ կեանքի մնայուն ճշմարտութիւնները:

HOW TO FORGIVE THE OFFENSE? ST. JOHN CHRYSOSTOM (Selected Homilies)




(Hub Publisher, USA, 2025)

«Ինչպե՞ս ներել վիրաւորանքը» աշխատութիւնը Սուրբ Յովհան Ոսկեբերանի ընտիր քարոզների ժողովածու է՝ կազմուած Գեորգ Սարկաւագ Գեորգեանի կողմից եւ յատկապէս ներկայացուած անգլիախօս ընթերցողներին: Նուիրուած լինելով քրիստոնէական կեանքի կարեւորագոյն առաքինութիւններից մէկին՝ ներողամտութեանը, գիրքը եկեղեցու մեծ Հօր հոգեշահ եւ դարերով չինացող ուսուցումների միջոցով պատասխանում է մարդկային հոգին յուզող բազմաթիւ հարցերի. ինչպե՞ս ներել մեզ վիրաւորողներին, հանդուրժել ուրիշների թերութիւններն ու սխալները, յաղթահարել բարկութիւնը, ռիսակալութիւնն ու դառնութիւնը, համբերել անարգանքին ու զրպարտութեանը, հաշտուել մեր դէմ մեղանշողների հետ եւ թշնամիների հանդէպ սեր ցուցաբերել:

Սուրբ Յովհան Ոսկեբերանի խորիմաստ եւ դարերով չինացող պատգամների միջոցով ընթերցողը հրաւիրւում է քննելու սեփական սիրտն ու հոգին եւ գիտակցելու, որ ուրիշներին ներելը ոչ միայն քրիստոնէական պարտականութիւն է, այլեւ հոգու բժշկութեան, ներքին խաղաղութեան եւ Աստծու ողորմութեանն արժանանալու ճանապարհ: Հեղինակի ընտրած քարոզներն ու հոգեւոր խրատները ցոյց են տալիս համբերութեան, խոնարհութեան, ապաշխարութեան, սիրոյ եւ հաշտութեան զօրութիւնը՝ առաջնորդելով ընթերցողին ազատուելու վիրաւորանքի ծանրութիւնից եւ իր սրտում վերականգնելու սերն ու խաղաղութիւնը:

Հիմնուած լինելով Սուրբ Գրքի եւ Եկեղեցու հայրաքանական հարուստ ժառանգութեան վրայ՝ սոյն հատորը հոգեւոր առաջնորդութիւն եւ քաջալերանք է ընծայում բոլոր նրանց, ովքեր ցանկանում են սովորել ներել, հաշտուել իրենց մերձաւորների հետ, մաքրագործել սեփական սիրտը եւ ապաշխարութեան ու սիրոյ ճանապարհով ընթանալ դէպի Աստծու ողորմութիւնն ու Երկնքի Արքայութիւնը:

THE LORD'S PRAYER THROUGH THE VOICE OF THE CHURCH FATHERS



(Publish MyBook, USA, 2025)

Սոյն աշխատութիւնը Գեորգ Սարկաւագ Գեորգեանի կողմից պատրաստուած եւ յատկապէս անգլիախօս ընթերցողներին ներկայացուած հոգեւոր հատոր է՝ նուիրուած Տէրունական աղօթքի խորիմաստ մեկնութեանը: Այն հոգեւոր հրաւեր է՝ վերագտնելու «Հայր մեր»-ը ոչ միայն որպէս շուրթերով արտասանուող սրբազան բառեր, այլ որպէս կենդանի աղօթք եւ հոգեւոր ճանապարհ՝ դէպի Աստծու հետ հաղորդութիւն ու միութիւն:

Եկեղեցու Սուրբ Հայրերի աստուածաբանական խորունկ իմաստութեան լոյսի ներքոյ «Հայր մեր»-ի իւրաքանչիւր խնդրանք բացուում է ընթերցողի առջեւ որպէս հոգեւոր վերելքի մի նոր աստիճան՝ առաջնորդելով դէպի Քրիստոսի խորհուրդը, մաքրագործելով սիրտը, նորոգելով միտքը եւ մարդու ամբողջ էութիւնը մօտեցնելով երկնաւոր Հօրը:


Գրքում, Եկեղեցու հնագոյն Հայրերի մեկնութիւնների հետ մեկտեղ, ներկայացուած են նաեւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու մեծանուն վարդապետներ Սուրբ Գրիգոր Տաթեւացու, Սուրբ Ներսէս Լամբրոնացու եւ Եղիշէ Վարդապետի՝ Տէրունական աղօթքին նուիրուած մեկնութիւնները, որոնք Գեորգ Սարկաւագ Գեորգեանը հայերէն բնագրերից թարգմանել է անգլերէն: Այսպիսով, ընթերցողին հնարաւորութիւն է տրուում հաղորդակից դառնալու Հայ Եկեղեցու հայրաբանական ու մեկնողական հարուստ ժառանգութեանը եւ «Հայր մեր» աղօթքի խորախորհուրդ բովանդակութիւնն ըմբռնելու հայ վարդապետական մտքի լոյսի ներքոյ:

Այս հատորի նպատակն է, որ այս խորհրդածությունները օգնեն ընթերցողին ոչ միայն առաւել գիտակցաբար արտասանելու Տէրունական աղօթքի բառերը, այլեւ ապրելու նրանց խորունկ խորհուրդը՝ իր կեանքը դարձնելով հաւատքի, ապաշխարութեան, սիրոյ եւ Աստծու կամքին հնազանդութեան կենդանի վկայութիւն: Թող «Հայր մեր»-ի իւրաքանչիւր բառ դառնայ լոյս՝ մտքի համար, մխիթարութիւն՝ հոգու համար եւ առաջնորդող ճանապարհ՝ դէպի Աստծու կենդանի ներկայութիւնը:

Քանզի երբ աղօթում ենք այնպէս, ինչպէս մեր Տէր Յիսուս Քրիստոս սովորեցրեց, աստիճանաբար սովորում ենք նաեւ ապրել այնպէս, ինչպէս Նա ապրեց՝ սիրով միացած Հօրը, առաջնորդուած Սուրբ Հոգով եւ աստուածային շնորհով նորոգուած ու կերպարանափոխուած: Եւ այնժամ «Հայր մեր»-ը դադարում է սոսկ արտասանուող աղօթք լինելուց եւ դառնում է մեր հոգեւոր կեանքի ճանապարհը՝ երկրից դէպի երկինք, մարդուց դէպի Աստուած եւ ժամանակաւորից դէպի յաւիտենականութիւն:

2026 ԹՈՒՎԱԿԱՆԻ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓՐԿՈՒԹԵԱՆ ԵՌԱԹԵՒ ՍԻՒՆԵՐԸ՝ ՀԱՒԱՏՔ, ԳՈՐԾԵՐ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ



(Տպագրուած է «Red Point» ՍՊԸ-ի տպարանում, Երեւան, 2026)


Սոյն աշխատութիւնը Գեորգ Սարկաւազ Գեորգեանի ջատագովական երկերի շարքի չորրորդ հատորն է՝ նուիրուած փրկութեան, հաւատի, բարի գործերի եւ Եկեղեցու անբաժանելի փոխյարաբերութեան աստուածաշնչեան, աստուածաբանական եւ հայրաբանական լուսաբանութեանը: Հիմնուելով Սուրբ Գրքի վկայութիւնների եւ Եկեղեցու Հայրերի ուսուցումների վրայ՝ հեղինակը ներկայացնում է քրիստոնէական փրկութեան ամբողջական ընկալումը՝ ընդգծելով, որ փրկութիւնը Աստծու շնորհի պարգեւն է, որն ընդունւում է կենդանի հաւատով, արտայայտւում սիրով ու բարի գործերով եւ իր լրումն ստանում Քրիստոսի Մարմնի՝ Սուրբ Եկեղեցու մէջ:

Աշխատութեան մէջ մասնաւորապէս քննւում են փրկութեան վարդապետութիւնը, Աստծու շնորհի եւ մարդու ազատ կամքի գործակցութիւնը, հաւատի ու բարի գործերի անբաժանելի կապը, այլադաւան քարոզիչների կողմից տարածուող՝ «մէկ անգամ փրկուած՝ ընդմիշտ փրկուած» ուսուցումը եւ դրա նկատմամբ Եկեղեցու վարդապետական դիրքորոշումը, ապաշխարութեան ու սրբացման շարունակական ընթացքը, ինչպէս նաեւ Եկեղեցու եւ Սուրբ Խորհուրդների փրկագործական նշանակութիւնը: Առանձին ուշադրութիւն է դարձնւում այն հարցին, թէ ո՞վ է որոշում մարդու փրկութիւնը՝ մարդը, թէ՞ Աստուած, եւ ինչո՞ւ ճշմարիտ հաւատը չի կարող սահմանափակուել միայն խօսքային դաւանութեամբ, այլ պէտք է իր կենդանի արտայայտութիւնը գտնի քրիստոնէական կեանքի, սիրոյ, հնազանդութեան եւ բարի գործերի մէջ:

Հեղինակը լուսաբանում է նաեւ, որ փրկութեան ճանապարհով ընթացող հաւատացեալը կոչուած է իր երկրային կեանքի ընթացքում ամրանալու հաւատի մէջ, իր հաւատը կենդանի դարձնելու բարի գործերով եւ որպէս գործօն անդամ ապրելու Քրիստոսի կենդանի Մարմնի՝ Եկեղեցու մէջ: Դարերի ընթացքում Եկեղեցին հաւատարմօրէն պահպանել եւ սերնդից սերունդ փոխանցել է առաքելական հաւատի աւանդը՝ Աւետարանը քարոզելով խօսքով ու գործով, վկայութեամբ ու նահատակութեամբ եւ, որպէս հոգեւոր Մայր, իր զաւակներին պարգեւելով սէր, գուրգուրանք եւ հոգեւոր սնունդ:

Այսպիսով, գիրքը ցոյց է տալիս, որ հաւատը, բարի գործերը եւ Եկեղեցին փրկութեան՝ միմեանցից անջատ ճանապարհներ չեն, այլ կազմում են մէկ ամբողջական հոգեւոր իրականութիւն: Եկեղեցու Հայրերի վկայութիւններով հարստացած սոյն աշխատութիւնը կարող է օգտակար ուղեցոյց լինել թե՛ հոգեւորականների եւ թե՛ բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են առաւել խորապէս ճանաչել քրիստոնէական փրկութեան խորհուրդը, ըմբռնել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու վարդապետական ուսուցումը եւ հիմնաւոր պատասխաններ գտնել հաւատի, բարի գործերի եւ Եկեղեցու փրկագործական առաքելութեան վերաբերեալ հարցերին:

WHY IS THE ICON OF THE BLESSED VIRGIN AND THE DIVINE CHILD PLACED ABOVE THE HOLY TABLE?



(Տպագրուած է «Red Point» ՄՊԸ-ի տպարանում, Երեւան, 2026)

Սոյն փոքրիկ գործը ծնունդ է աղօթական խոկումից՝ Սուրբ Սեղանի առջեւ, որտեղ Սուրբ Կոյս Մարիամի՝ Աստուածամօր սրբազան պատկերը՝ իր գրկում Մանուկ Յիսուսին, լուրթեամբ խօսում է իւրաքանչիւր հաւատացեալի սրտին: Հայ Առաքելական Եկեղեցում Սուրբ Սեղանի վերեւում գտնուող այս պատկերը պարզ զարդարանք չէ, այլ Մարմնաւորման խորհրդի կենդանի դաւանութիւն եւ Աւետարանի լուռ հռչակում:

Աստուածաշնչական, հայրաբանական եւ ծիսական վկայութիւնների լոյսի ներքոյ աշխատութեան մէջ ներկայացւում են Սրբուհի Աստուածածնի՝ որպէս Նոր Ուխտի Տապանակի եւ կենդանի Տաճարի խորհուրդը, Մարմնաւորման եւ Սուրբ Հաղորդութեան անբաժանելի կապը, նրա տեղն ու ներկայութիւնը Եկեղեցու ծիսական կեանքում, բարեխօսութիւնը, հաւատը, հնազանդութիւնը եւ մայրական հոգածութիւնը: Առանձին ուշադրութիւն է դարձւում նաեւ սրբապատկերի՝ որպէս «լուռ Աւետարան», աստուածաբանական եւ հոգեւոր նշանակութեանը, ինչպէս նաեւ Սուրբ Սեղանի առջեւ երկնքի եւ երկրի խորհրդաւոր միութեանը:

Այս խորհրդածութիւնների նպատակն է օգնել ընթերցողին անցնելու սրբապատկերի արտաքին գեղեցկութիւնից անդին եւ անելի խորապէս մօտենալու նրա աստուածաբանական, ծիսական եւ հոգեւոր իմաստին: Սրբուհի Աստուածածինը, որ իր գրկում պահում է Քրիստոսին եւ կանգնած է Սուրբ Սեղանի վերեւում, մեզ յայտնում է երկնքի եւ երկրի միութիւնը, աստուածային շնորհի մերձաւորութիւնը եւ նոյն Տիրոջ կենդանի ներկայութիւնը, Ով մի ժամանակ

մարմին առաւ նրա անապական արգանդից եւ այժմ իւրաքանչիւր Սուրբ Պատարագի ընթացքում Իրեն պարգեւում է հաւատացեալներին՝ Սուրբ Սեղանի վրայ:

Այս փոքրիկ աշխատութիւնը հրաւեր է՝ հաւատի աչքերով դիտելու Սրբուհի Աստուածածնի եւ Մանուկ Յիսուսի սրբապատկերը եւ նրա միջոցով աւելի խորապէս ճանաչելու Մարմնացեալ Քրիստոսի խորհուրդը, սիրելու Սուրբ Պատարագը եւ հաղորդակից դառնալու Եկեղեցու կենդանի հաւատին:

ԲՈՒՐՎԱՌԻ ԼՈՒՌ ՔԱՐՈՉԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՄ Երբ խունկը խօսում է



(Տպագրուած է «Red Point» ՄՊԸ-ի տպարանում, Երեւան, 2026)

Սոյն գիրքը բուրվառի խոր խորհրդաբանութեան լուսաւոր մեկնութիւնն է՝ բացայայտելով նրա անբառ պատգամը Հայ Առաքելական Եկեղեցու ծիսական եւ հոգեւոր կեանքում: Աստուածաշնչական, հայրաբանական եւ ծիսական վկայութիւնների լոյսի ներքոյ աշխատութեան մէջ ներկայացւում են բուրվառի ծագումն ու կառուցուածքը, նրա առանձին մասերի խորհրդաբանական իմաստը, ինչպէս նաեւ խունկի, ծխի, կրակի, ածուխի, շղթաների եւ զանգակների հոգեւոր նշանակութիւնը:

Գիրքը բացայայտում է բուրվառը՝ որպէս Եկեղեցու կենդանի խորհրդապատկեր, երկինքն ու երկիրը կապող աղօթքի ճանապարհ եւ Աւետարանի լուռ քարոզ: Առանձին ուշադրութիւն է դարձւում բուրվառի խնկամանի՝ որպէս Սրբուհի Աստուածածնի անապական արգանդի եւ կենդանի Տաճարի խորհրդապատկերին, վառուող ածուխի՝ որպէս Աստծու շնորհով բորբոքուած մարդկային սրտի, երեք շղթաների՝ որպէս Սուրբ Երրորդութեան, իսկ զանգակների՝ հնչիւնի՝ որպէս հրեշտակային օրհներգութեան եւ հոգեւոր արթնութեան կանչի նշանակութեանը:


Աշխատութեան մէջ ցոյց է տրւում, թէ ինչպէս բուրվառի շարժումը, խունկի բուրմունքը, ծխի վերելքը եւ կրակի ներգործութիւնը վերածւում են կենդանի աղօթքի, ապաշխարութեան կանչի, միսիթարութեան եւ Աստծու ներկայութեան զգալի վկայութեան: Խնկարկութիւնը ներկայանում է ոչ միայն որպէս արտաքին

ծիսական գործողութիւն, այլ որպէս Եկեղեցու աղօթքի, սրբագործման եւ երկնային պաշտամունքին մասնակցութեան կենդանի արտայայտութիւն:

Սոյն գիրքը հրաւիրում է ընթերցողին նոր հայեացքով դիտելու Եկեղեցու սրբազան ծեսերը՝ որպէս կենդանի եւ ներգործող իրականութիւններ, եւ բուրվառի արտաքին տեսքից անցնելու նրա աստուածաբանական ու հոգեւոր խորքը: Այն կոչ է՝ վերարթնացնելու հոգեւոր զգայունութիւնը, խորացնելու աղօթքը, մաքրելու սիրտը եւ աւելի գիտակցաբար մասնակցելու Սուրբ Պատարագին՝ մտնելով այն ներքին լոռութեան մէջ, որտեղ Աստծու ձայնը լսելի է դառնում աւելի յստակ:

Այս էջերը հրաւեր են՝ խունկի բարձրացող ծիսի հետ բարձրացնելու նաեւ սրտի աղօթքը, բացուելու Սուրբ Հոգու սրբագործող շնորհի առջեւ եւ թոյլ տալու, որ բուրվառի «լուռ քարոզը» վերափոխի մարդու ներաշխարհը, որպէսզի աղօթքը դառնայ աւելի կենդանի ու գիտակից, սիրտը՝ աւելի մաքուր, իսկ կեանքը՝ աւելի սրբագործուած:

ԾԽԵԼԸ ՄԵՂՔ Է Ծխելու վնասակար սովորութիւնը



(Տպագրուած է «Red Point» ՄՊԸ-ի տպարանում, Երեւան, 2026)

Սոյն գիրքը նուիրուած է ծխելու վնասակար սովորութեան աստուածաբանական, հոգեւոր եւ բարոյական քննութեանը՝ այն դիտարկելով քրիստոնէական հաւատի եւ Հայ Առաքելական Եկեղեցու վարդապետութեան լոյսի ներքոյ: Հեղինակը պատասխանում է ծխելու վերաբերեալ զանազան հարցերի. ինչո՞ւ է ծխելը շատերի կողմից մեղք համարուում, արդե՞՞ք այն վնասում է միայն մարմնին, թե՞ նաեւ մարդու հոգուն, եւ ինչպե՞ս կարող է այդ սովորութիւնը վերածուել կախումաւորութեան՝ աստիճանաբար տիրելով մարդու կամքին եւ թուլացնելով նրա հոգեւոր զգոնութիւնը:

Աստուածաշնչական, հայրաբանական եւ բարոյախրատական վկայութիւնների լոյսի ներքոյ աշխատութեան մէջ քննուում են մարմնի՝ որպէս Սուրբ Հոգու տաճարի քրիստոնէական ըմբռնումը, ծխելու մարմնական եւ հոգեւոր հետեւանքները, վնասակար սովորութիւնների ու մեղքի փոխյարաբերութիւնը, փոքր թուացող մեղքերի՝ աստիճանաբար հոգեւոր կապանքների վերածուելու վտանգը, ինչպէս նաեւ ծխելու եւ այլ կախումաւորութիւնների միջեւ գոյութիւն ունեցող հոգեւոր զուգահեռները: Առանձին ուշադրութիւն է դարձուում այն հարցին, թէ ինչպէս ծխելը կարող է մթազնել մարդու միտքը, թուլացնել կամքը, խաթարել ներքին ազատութիւնը եւ հեռացնել նրան աղօթական ու զգաստ հոգեւոր կեանքից:

Գիրքը ներկայացնում է նաեւ ծխախոտի գործածութեան պատմական ընթացքը եւ դրա նկատմամբ տարբեր ժամանակներում ձեւաւորուած

վերաբերմունքը՝ ցոյց տալով, որ ծխելու խնդիրը չի սահմանափակում միայն առողջապահական մտահոգություններով: Այն շօշափում է մարդու՝ Աստծուց ստացած կեանքի, մարմնի եւ հոգու նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի հարցը՝ յիշեցնելով, որ քրիստոնեան կոչուած է պահպանելու այդ պարգեւները, հեռու մնալու իրեն ստրկացնող եւ ներաշխարհը վնասող կրթերից ու սովորութիւններից եւ ապրելու Աստծու պարգեւած ազատութեան մէջ:


Աշխատութեան կարեւոր բաժիններից մէկը նուիրուած է ծխելու կախումաւորութիւնից ազատագրուելու ճանապարհին: Հեղինակը ցոյց է տալիս, որ քրիստոնեական պատասխանը չի սահմանափակում միայն մեղքի դատապարտմամբ, այլ մարդուն առաջնորդում է դէպի ապաշխարութիւն, աղօթք, հոգեւոր պայքար եւ բժշկութիւն: Ծխելը ներկայացւում է որպէս յաղթահարելի կապանք, իսկ Քրիստոսի շնորհը՝ որպէս մարդու կամքը զօրացնող, ներաշխարհը նորոգող եւ դէպի ճշմարիտ ազատութիւն առաջնորդող կենդանի զօրութիւն:

Գիրքը յիշեցնում է, որ քրիստոնեայ հաւատացեալը կոչուած է Աստծուց ստացած պարգեւները՝ մարմինն ու հոգին, պահելու մաքուր եւ առողջ, հեռու մնալու վնասակար կրթերից եւ իր կեանքը հարստացնելու Աւետարանի լոյսով: Այն հրաւեր է՝ վերաբնելու սեփական սովորութիւնները, ճանաչելու մարդու ազատութիւնը սահմանափակող կապանքները եւ ապաշխարութեամբ ու հաւատքով ընթանալու դէպի հոգեւոր նորոգութիւն:

Այս էջերը գրուած են ոչ թէ ծխող մարդուն դատապարտելու, այլ նրան յոյսի, բժշկութեան եւ ազատութեան ճանապարհ ցոյց տալու նպատակով: Գիրքը յիշեցնում է, որ Աստծու ողորմութիւնն ու շնորհը զօրաւոր են մարդկային ամէն թուլութիւնից, եւ որ անկեղծ ապաշխարութեամբ, աղօթքով ու հետեւողական հոգեւոր պայքարով մարդը կարող է ազատուել իրեն կապող սովորութիւններից, վերագտնել իր ներքին ազատութիւնը եւ իր մարմինն ու հոգին դարձնել Աստծու ներկայութեան մաքուր ու կենդանի տաճար:

ՔՇՈՑԻ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Քշոցը՝ խորհրդանշական քարոզ առանց խօսքերի



(Տպագրուած է «Red Point» ՄՊԸ-ի տպարանում, Երեւան, 2026)

Սոյն գիրքը նուիրուած է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ծիսական կեանքի համեստ, սակայն խորախորհուրդ սպասներից մէկի՝ քշոցի պատմական, աստուածաբանական եւ հոգեւոր նշանակութեան բացայայտմանը: Հեղինակը քշոցը ներկայացնում է ոչ միայն որպէս ծիսական առարկայ, այլեւ որպէս «քարոզ առանց խօսքերի»՝ Եկեղեցու կենդանի խորհրդանիշ, որն իր շարժումով ու դողանջով հաւատացեալին հրաւիրում է զգաստութեան, ներքին զարթօնքի եւ Աստծու ներկայութեան գիտակցութեան:

Սուրբ Գրքի վկայութիւնները, հայրաբանական գրականութիւնը եւ Հայ Եկեղեցու ծիսական ավանդութիւնը համադրելով՝ աշխատութեան մէջ քննուում են քշոցի ծագումն ու պատմական գործածութիւնը, նրա սրբարար եւ սաստող խորհուրդը, հրեշտակային ներկայութեան հետ ունեցած խորհրդանշական կապը, ինչպէս նաեւ նրա նշանակութիւնը՝ որպէս ճշմարիտ երկրպագութեան, ներքին զսպման, ապաշխարութեան, խոնարհութեան եւ ծառայութեան նշան:

Առանձին ուշադրութիւն է դարձնում տաճարի մաքրագործման ակետարանական դրուագին եւ նրա հոգեւոր մեկնութեանը: Քրիստոսի ձեռքում քշոցը բացայայտում է ոչ թէ որպէս բռնութեան միջոց, այլ որպէս աստուածային իշխանութեան, սրբարար խրատի եւ հովուական սիրոյ արտայայտութիւն: Ինչպէս Քրիստոս մաքրեց տաճարը, այնպէս էլ Նա հրաւիրում է մարդուն մաքրելու իր ներքին տաճարը՝ սիրտը, հեռացնելու մեղքի աղմուկը, զսպելու կրքերը եւ իր կամքը հնազանդեցնելու Աստծու կամքին:

Գիրքը բացայայտում է նաեւ քնոցի հրեշտակային խորհրդաբանութիւնը՝ այն ներկայացնելով որպէս Սուրբ Սեղանի շուրջ երկնային զօրքերի անտեսանելի ներկայութեան եւ ծառայութեան տեսանելի նշան: Քնոցի շարժումն ու մեղմ դօղանքը հաւատացեալին յիշեցնում են, որ Սուրբ Պատարագը միայն երկրային արարողութիւն չէ, այլ երկնքի եւ երկրի խորհրդաւոր հանդիպում, որտեղ մարդը կոչուած է մաքուր սրտով, զգաստ մտքով եւ խոնարհ հոգով կանգնելու Աստծու առջեւ:

Աշխատութեան մէջ քնոցը ներկայացւում է նաեւ որպէս Աստծուն պատկանելութեան, Նրա Խօսքի ներգործութեան, հովուական առաջնորդութեան, խոնարհութեան եւ անձնուէր ծառայութեան խորհրդանիշ: Քնոցի պարզ պատկերի մէջ բացայայտւում է հոգեւոր խոր ճշմարտութիւն. սրբութիւնը սկսւում է ոչ թէ ուրիշին սաստելով, այլ սեփական անձը մաքրելով, կրքերը զսպելով եւ թոյլ տալով, որ Աստծու շնորհը նորոգի մարդուն ներաշխարհը:

Սոյն աշխատութիւնը, ուսումնասիրութիւն լինելուց բացի, նաեւ հոգեւոր ուղեցոյց է, որն ընթերցողին հրաւիրում է Եկեղեցու ծիսական կեանքը դիտելու ոչ միայն որպէս արտաքին արարողութիւնների ամբողջութիւն, այլ որպէս դէպի Աստուած առաջնորդող կենդանի եւ խորհրդաւոր ճանապարհ: Հեղինակը, պարզ ու յստակ լեզուով բացայայտելով քնոցի բազմաշերտ խորհուրդը, ձգտում է հաւատացեալին առաջնորդել դէպի ներքին զգաստութիւն, ապաշխարութիւն, հոգեւոր մաքրութիւն եւ ճշմարիտ երկրպագութիւն:

Գիրքը յիշեցնում է, որ Եկեղեցու մէջ իւրաքանչիւր ծիսական նշան եւ շարժում իր մէջ կրում է հոգեւոր պատգամ: Քնոցն էլ իր անխօս քարոզով մարդուն հրաւիրում է մաքրելու սրտի տաճարը, սթափեցնելու միտքը եւ բացուելու Աստծու սրբարար շնորհի առջեւ, որպէսզի Նա դառնայ Սուրբ Հոգու արժանի բնակարան եւ իր կեանքով վկայի Աստծու կենդանի ներկայութիւնը:

ՅՐԻՈՒԹԵԱՆ ԱՐՅԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ ՅԱՆՑԱՆԸ

Անձայն ճիչը՝ մեր խղճի առջեւ



(Տպագրուած է «Red Point» ՄՊԸ-ի տպարանում, Երեւան, 2026)

Սոյն գիրքը նուիրուած է մարդկային կեանքի սրբութեան եւ յղիութեան արհեստական ընդհատման աստուածաբանական, հոգեւոր ու բարոյական քննութեանը՝ այն դիտարկելով Սուրբ Գրքի, Եկեղեցու Հայրերի ուսուցման, կանոնական աւանդութեան եւ գիտական վկայութիւնների լոյսի ներքոյ: Հեղինակը բացայայտում է, որ մարդկային կեանքը Աստծու սուրբ եւ անգին պարգէն է՝ սկսած բեղմնաւորման առաջին իսկ պահից, եւ որ մօր արգանդում ծնւաւորուող մանուկն արժանի է սիրոյ, յարգանքի եւ պաշտպանութեան:

Աշխատութեան մեջ քննուում են ժամանակակից հասարակութեան մեջ յղիութեան արհեստական ընդհատման տարածման բարոյական եւ հոգեւոր պատճառները, սաղմագիտութեան ժամանակակից նուաճումները եւ մարդկային կեանքի սկզբի վերաբերեալ գիտական վկայութիւնները: Առանձին ուշադրութիւն է դարձնում Սուրբ Գրքի այն հատուածներին, որոնք վկայում են մօր արգանդում ծնւաւորուող կեանքի աստուածատուր արժեքի մասին, ինչպէս նաեւ Եկեղեցու Հայրերի ուսուցմանը եւ Հայ Առաքելական Եկեղեցու կանոնական աւանդութեանը:

Գիրքը անդրադառնում է նաեւ ժամանակակից աշխարհում յղիութեան արհեստական ընդհատումն արդարացնող զանազան տեսակետներին եւ փաստարկներին՝ դրանց պատասխանելով քրիստոնէական մարդաբանութեան, բարոյական ուսուցման եւ կեանքի սրբութեան անփոփոխ սկզբունքի հիման վրայ: Հեղինակը շեշտում է, որ մարդը կոչուած չէ տնօրինելու իրեն չպատկանող կեանքը, այլ պարտաւոր է պահպանելու եւ պաշտպանելու Աստծուց պարգեւուած

մարդկային կեանքը, յատկապես երբ այն անպաշտպան է եւ դեռեւս ձայն չունի խօսելու իր համար:


Աշխատութեան մէջ յատուկ տեղ է յատկացուած նաեւ մարդկային կեանքի սրբութեան քրիստոսաբանական եւ հաղորդութեանական ըմբռնմանը, Եկեղեցու Զայրերի վկայութիւններին, ինչպէս նաեւ այն հոգեւոր պատասխանատուութեանը, որ կրում են ընտանիքը, Եկեղեցին եւ հասարակութիւնը՝ չճնուած մանկան կեանքի պաշտպանութեան գործում: Գիրքը հրաւիրում է ընթերցողին վերագտնելու մարդկային կեանքի աստուածատուր արժէքը եւ խղճի արթնութեամբ պատասխանելու ժամանակակից աշխարհի բարոյական մարտահրաւերներին:

Սակայն սոյն աշխատութիւնը չի սահմանափակուում միայն յղիութեան արիեստական ընդհատման մեղքի եւ ողբերգութեան բացայայտմամբ: Այն միաժամանակ հովուական եւ միսիթարական խօսք է նրանց համար, ովքեր իրենց կեանքում կրել են այդ ծանր վերքը: Զեղինակը, չթաքցնելով ճշմարտութիւնը եւ չնուազեցնելով մեղքի ծանրութիւնը, ընթերցողի առջեւ բացում է ապաշխարութեան, հոգեւոր բժշկութեան, ներման եւ Աստծու անսահման ողորմութեան ճանապարհը՝ յիշեցնելով, որ Եկեղեցին ոչ միայն ճշմարտութեան վկան է, այլեւ վիրաւոր հոգիների բժշկութեան եւ յոյսի ապաստանը:

Գրքի կարեւոր բաժինները նուիրուած են նաեւ վիժման եւ մահացած նորածնի կորստի վիշտը կրող մայրերի միսիթարութեանը, ապաշխարութեան ու ներման խորհրդին եւ աղօթական կեանքին: Այսպիսով, աշխատութիւնը ոչ միայն աստուածաբանական եւ բարոյական ուսումնասիրութիւն է, այլեւ հոգեւոր ուղեցոյց, որ մարդուն առաջնորդում է խղճի արթնութեան, ապաշխարութեան, բժշկութեան եւ Քրիստոսի մէջ վերագտնուող յոյսի ճանապարհով:

Այս էջերը հրաւեր են՝ ընտրելու կեանքը, պաշտպանելու անմեղն ու անպաշտպանը, վերարթնացնելու խղճի ձայնը եւ վերադառնալու ճշմարտութեան ու յոյսի ճանապարհին: Գիրքը յիշեցնում է, որ Աստծու ողորմութիւնը մեծ է մարդկային ամեն մեղքից ու թուլութիւնից, եւ որ անկեղծ ապաշխարութեամբ ու հաւատքով մարդը կարող է ստանալ ներում, հոգեւոր բժշկութիւն եւ նոր կեանքի շնորհ՝ Քրիստոսի մէջ:

ԳՆԱՄ, ԹԷ՝ ԶԳՆԱՄ ԵԿԵՂԵՑԻ



(Տպագրուած է «Red Point» ՍՊԸ-ի տպարանում, Երեւան, 2026)

Սոյն գիրքը նուիրուած է Եկեղեցու հոգեւոր եւ փրկագործական նշանակութեան քննութեանը՝ բացայայտելով, թէ ինչո՞ւ քրիստոնէական հաւատքը չի կարող սահմանափակուել միայն անձնական համոզումներով կամ անհատական աղօթքով, այլ իր լիարժէք արտայայտութիւնն է գտնում Եկեղեցու կենդանի եւ խորհրդական կեանքի մէջ: Հեղինակը ընթերցողին հրաւիրում է վերաբծելորել իր յարաբերութիւնը Աստծու եւ Եկեղեցու հետ՝ անդրադառնալով այն հարցերին, կասկածներին եւ ներքին խոչընդոտներին, որոնք յաճախ մարդուն հեռու են պահում Աստծու տնից եւ Սուրբ Սեղանից:

Աշխատութեան մէջ քննուում են Եկեղեցի յաճախելու անհրաժեշտութիւնը, կիրակի օրուայ եւ Սուրբ Պատարագի նշանակութիւնը, անհատական եւ ընդհանրական աղօթքի փոխյարաբերութիւնը, Մկրտութեան եւ Սուրբ Հաղորդութեան խորհուրդները, ինչպէս նաեւ Եկեղեցու դերը մարդու հաւատքի ամրապնդման, հոգեւոր վերածննդի եւ փրկութեան ճանապարհին: Առանձին ուշադրութիւն է դարձնում այն տարածուած մտածումներին, թէ կարելի է հաւատալ Աստծուն՝ առանց Եկեղեցի յաճախելու, աղօթել միայն տանը կամ Աստծուն կրել սրտում՝ առանց Եկեղեցական կեանքին մասնակցելու:

Գիրքը բացայայտում է նաեւ այն տեսանկի եւ անտեսանելի պատճառները, որոնք մարդուն հեռացնում են Եկեղեցուց՝ առօրեայ հոգսերը, ժամանակի սղութիւնը, յոգնածութիւնը, անարժանութեան զգացումը, հոգեւոր անտարբերութիւնը, յուսահատութիւնը, կասկածները, ուրիշներից կամ հոգեւորականներից կրած հիասթափութիւնը եւ այն համոզումը, թէ Եկեղեցին անհրաժեշտ չէ մարդու եւ Աստծու յարաբերութեան համար: Հեղինակը, Սուրբ Գրքի, Եկեղեցու վարդապետութեան եւ Հայրերի ուսուցման լոյսի ներքոյ,

պատասխանում է այս հարցերին՝ ցոյց տալով, որ կենդանի հաւատքը անբաժանելի է աղօթական, հաղորդութեանական եւ եկեղեցական կեանքից:


Աշխատութեան մեջ յատուկ տեղ է յատկացուած եկեղեցու՝ որպէս Քրիստոսի խորհրդաւոր Մարմնի եւ հաւատացեալի հոգեւոր Մօր ըմբռնմանը: Եկեղեցին ներկայացում է ոչ միայն որպէս աղօթավայր կամ հաւատացեալների հաւաքատեղի, այլ որպէս աստուածային շնորհի, հոգեւոր բժշկութեան եւ փրկութեան սրբազան միջավայր, ուր մարդը Սուրբ խորհուրդների, ընդհանրական աղօթքի եւ յատկապէս Քրիստոսի կենարար Մարմնին ու Արեանը հաղորդուելու միջոցով միանում է իր Տիրոջը եւ մասնակից դառնում աստուածային կեանքին:

Գիրքը անդրադառնում է նաեւ այն մարդկանց հոգեւոր վիճակին, ովքեր եկեղեցի են յաճախում, սակայն իրենց սրտում ուրախութիւն չեն ապրում, ովքեր աղօթել են, բայց կարծել են, թէ իրենց կեանքում ոչինչ չի փոխուել, ինչպէս նաեւ նրանց, ովքեր դժուարանում են հասկանալ եկեղեցական կեանքը կամ վստահել եկեղեցուն եւ հոգեւորականներին: Այս հարցերը քննւում են հովուական զգուշութեամբ եւ հոգեւոր պատասխանատուութեամբ՝ ընթերցողին առաջնորդելով ոչ թէ դատապարտութեան, այլ ինքնաքննութեան, ապաշխարութեան եւ հաւատքի վերանորոգման ճանապարհով:

Սոյն աշխատութիւնը պարզ ուսուցում կամ եկեղեցի յաճախելու արտաքին յորդոր չէ: Այն հոգեւոր կոչ է՝ վերադառնալու Աստծու տուն, վերագտնելու կենդանի հաւատքը եւ խորապէս մասնակցելու եկեղեցու սրբազան կեանքին: Հեղինակը յիշեցնում է, որ միայն Մայր Եկեղեցին կարող է վերականգնել մարդկային սրտերը, արթնացնել խիղճը, զօրացնել տկարացած հաւատքը եւ մարդուն առաջնորդել իր աստուածատուր կոչման ու յաւիտենական փրկութեան ճանապարհով:

Այս էջերը հրաւեր են՝ մօտենալու ոչ միայն եկեղեցու շէմին, այլեւ Տիրոջ սրտին, մասնակցելու Սուրբ Պատարագին, ճաշակելու Քրիստոսի կենարար Մարմնին ու Արիւնը եւ եկեղեցու անխորտակելի գանձերով հարստացնելու հոգեւոր կեանքը: Գիրքը ընթերցողին առաջնորդում է դէպի այն ճշմարիտ խաղաղութիւնը, որ միայն Քրիստոսի ներկայութեան մէջ է գտնւում, եւ դէպի այն մշտնջենաւոր տունը, ուր մարդկային հոգին վերագտնում է իր Արարչին, իր փրկութիւնը եւ իր յաւիտենական հանգիստը:

ԿԱՐԳ ԱՂՕԹԻՑ Ի ԺԱՄ ՅՈԳԵՎԱՐՔԻ



(Տպագրուած է «Red Point» ՄՊԸ-ի տպարանում, Երեւան, 2026)

«Կարգ Աղօթից Ի Ժամու Հոգեվարքի» ծիսական սոյն գրքոյկը պատրաստուած է որպէս հոգեւոր, ծիսական եւ հովուական ուղեցոյց՝ կեանքի վերջին ժամերին մահամերձ հաւատացեալի կողքին Եկեղեցու աղօթական ներկայութիւնն ապահովելու եւ Նրան Քրիստոսի սիրով ու Յարութեան յոյսով դէպի յաւիտենական կեանք առաջնորդելու համար: Աշխատութիւնը վկայում է, որ Սուրբ Եկեղեցին իր զաւակին առանձին չի թողնում Նոյնիսկ կեանքի վերջին շնչին, այլ աղօթքով, օրհնութեամբ, Սուրբ Խորհուրդներով եւ մայրական հոգատարութեամբ ուղեկցում է Նրան ժամանակաւոր կեանքից դէպի յաւիտենութիւն:

Գրքոյկի մէջ ներկայացւում է հոգեվարքի ժամանակ կատարուող աղօթական կարգը, որը կարող է մատուցուել հիւանդանոցում, տանը կամ այլ վայրում՝ ըստ ժամանակի, հանգամանքների եւ մահամերձի վիճակի: Առանձին ուշադրութիւն է դարձնում հոգեւորականի հովուական ներկայութեանը, մահամերձին ապաշխարութեան եւ խոստովանութեան առաջնորդելուն, մեղքերի արձակմանը եւ, հնարաւորութեան պարագայում, Սուրբ Հաղորդութեան մատուցմանը՝ որպէս Քրիստոսի հետ վերջին եւ ամենասուրբ հաղորդութիւն:

Աշխատութեան մէջ ընդգծւում է, որ հոգեվարքի կարգը սոսկ ծիսական արարողութիւն կամ մահուան սպասման կարգ չէ, այլ Եկեղեցու կենդանի աղօթքն ու հոգեւոր ներկայութիւնն է մահուան սահմանին կանգնած մարդու կողքին: Այն բացայայտում է Եկեղեցու մայրական հոգատարութիւնը, որով հաւատացեալը մինչեւ իր վերջին շունչը մնում է Քրիստոսի եւ Նրա Խորհրդաւոր Մարմնի՝ Սուրբ Եկեղեցու կենդանի անդամը:

Ծիսական բնագիրը ներկայացուած է գրաբար, արեւմտահայերէն, արեւելահայերէն եւ անգլերէն տարբերակներով՝ այն մատչելի եւ գործածելի դարձնելով տարբեր լեզուական միջավայրերում:

Սոյն ծիսական գրքոյկը նախատեսուած է հոգեւորականների, սարկաւազների եւ, անհրաժեշտութեան պարագայում, մահամերձի կողքին գտնուող հաւատացեալների համար՝ որպէս եկեղեցական ոգով մշակուած գործնական եւ հոգեւոր ուղեցոյց: Այն կոչուած է օգնելու, որպէսզի մահամերձ մարդն իր վերջին երկրային ճանապարհը չանցնի միայնակ, այլ շրջապատուած լինի աղօթքով, սիրով, խաղաղութեամբ եւ Մայր Եկեղեցու հոգատար ներկայութեամբ:

«Կարգ Աղօթից ի Ժամու Զոգեվարքի» աշխատութիւնը ոչ միայն ծիսական կարգ է, այլեւ հոգեւոր կոչ՝ ուղղուած նաեւ ողջերին: Այն յիշեցնում է մարդկային կեանքի անցաւորութեան, հոգու անմահութեան, ապաշխարութեան, զգաստութեան եւ Եկեղեցու սրբարար կեանքին ու փրկագործական խորհուրդներին մասնակցելու անհրաժեշտութեան մասին: Գրքոյկի հիմնական պատգամն այն է, որ քրիստոնեան մինչեւ իր վերջին շունչը պատկանում է Քրիստոսին, իսկ Սուրբ Եկեղեցին աղօթքով եւ մայրական սիրով ուղեկցում է իր զաւակին՝ կեանքի վերջին պահից մինչեւ յաւիտենականութեան շեմը:

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Այս աշխատութիւնները ծնունդ են առել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ հոգեւոր եւ աստուածաբանական հարուստ ժառանգութեան հանդէպ սիրուց, հաւատքից եւ ծառայութեան համեստ ձգտումից: Դրանց էջերում ամփոփուած են Սուրբ Գիրքի պատգամները, Եկեղեցու Հայրերի իմաստութիւնն ու մեր սուրբ հաւատքի դարաւոր ավանդութիւնը՝ այն յոյսով, որ դրանք կարող են ընթերցողի համար դառնալ հոգեւոր ճանաչման, խորհրդածութեան եւ հաւատքի զօրացման համեստ միջոց:

Եթէ այս աշխատութիւնները կարողանան ընթերցողին նոյնիսկ մէկ փոքր քայլով աւելի մօտեցնել Աստծոյ խօսքին, հաղորդակից դարձնել Եկեղեցու Հայրերի հոգեւոր իմաստութեան եւ առաջնորդել մեր սուրբ հաւատքի առաւել խոր ճանաչման ու ապրումին, ապա դրանք ծառայած կը լինեն իրենց ճշմարիտ նպատակին:

Սրտագին մաղթանքս է, որ այս էջերի միջոցով ընթերցողը ոչ միայն գիտելիք ձեռք բերի, այլեւ հոգեւորապէս զօրանայ, իր հաւատքին մէջ հաստատուի եւ նորոգուած սրտով շարունակի իր ճանապարհը Քրիստոսի հետ:

Թող Ամենակալ Աստուած օրհնի իւրաքանչիւր ընթերցողին, լուսաւորի նրա միտքը, զօրացնի նրա հաւատքը եւ առաջնորդի նրան կեանքի այն ճանապարհով, որ տանում է դէպի ճշմարտութիւն, յոյս եւ փրկութիւն՝ ի Քրիստոս Յիսուս:

Թող այս համեստ աշխատութիւնների իւրաքանչիւր էջ ծառայի մէկ նպատակի՝ Աստծու փառքին եւ մարդկային հոգիներու լուսաւորութեանը:

Փա՛ռք եւ գոհութիւն Աստծուն՝ ամենայնի համար:

